

ՄԻՔԱՅԷԼ ՎԱՐԱՆԴԵԱՆ

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Բ. ՀԱՏՈՐ

ՏՊԱՐԱՆ «ՅՈՒՍԱՐԵՐ»

ԳԱՀԻՐԷ

1950

ՄԻՔԱՅԷԼ ՎԱՐԱՆԴԵԱՆ

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Բ. ՀԱՏՈՐ

ՅՊԱՐԱՆ «ՅՈՒՍԱԲԵՐ»

ԳԱՀԻՐԷ

1950

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

1934 Ապր. 26ին անակնկալ մահը մեզմե անմիտ խլեց Հ. Յ. Դաւենակցութեան ակնառու ճեսաբաններէն Միխայիլ Վարանդեանը. Իր մահով անաւարտ մնաց այս գունեղ ու վաստակաւոր գրչի հիմնական գործերէն մէկը՝ «Հ. Յ. Դ. Պատմութիւնը», որուն միայն առաջին հատորը լոյս տեսաւ հեղինակի ողջութեան, մինչ երկրորդ հատորը մնաց վերախմբագրուելիք վիճակի մէջ:

Այսօր, երբ կը տեսնուին Դաւենակցութեան 60ամեակը, — ալեծուփ անցներով լի պատմաբան մը, որուն մէջ իր պատուաւոր տեղն ունի մեր մեծ ընկերք, — Դաւենակցութեան Գերագոյն Մարմինը որոշեց հրատարակութեան սալ — քո՛ղ քէ իր բերի վիճակին մէջ — Վարանդեանի տնայնագրութեան՝ անոր «Հ. Յ. Դ. Պատմութեան» երկրորդ հատորը.

Այս հրատարակութեամբ գալոց սերունդներուն մեծ անկորուստ փոխանցած կ'ըլլանք ոչ միայն քանկագին նշխար մը, այլեւ ապահոված կ'ըլլանք Վարանդեանի անմիջական՝ այնքան սուղ ու քաղցր մասնակցութիւնը Դաւենակցութեան 60ամեակին: Պարագայ մը, որ կրկնապէս նուիրական կը դարձնէ այս գործը ընթերցող նայ հասարակութեան աչքին.

Հ. Յ. Դ. ԲԻԻԲՕ



ՄԻՔԱՅԷԼ ՎԱՐԱՆԳԵԱՆ



ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ



Է. ԱԿՆՈՒՆԻ



Ա. ՎՈՒՄԵԱՆ



ԱՐԵՏԻՍ ԱԶԱՐՈՆԵԱՆ



ՓԱՐՕ ՓԱՍՏՐՄԱՃԵԱՆ



Է Ա Ժ Ա Կ



Գ Ե Ղ Ա Մ Բ Ա Ր Ս Ե Ղ Ե Ա Ն



Վ Ա Ր Գ Ա Ն



Հ Ր Ա Չ Թ Ի Ր Ե Ա Ք Ե Ա Ն



ԱՆԴՐԱՆԻԿ ԵՒ ՌՈՒԲԷՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ



Մ Ո Ւ Ր Ա Տ



Ի Շ Ե Ա Ն



ՔԵՌԻ ԵՒ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԽԵԶՈ



Ի ՇԽԱՆ, ՎԱՐԴԱՆ ՇԱՀՊԱԶ, ԱՐԱՄ



ՎԱՀԱԳՆ ՏԱԹԵԻՆԱՆ, ՎԱՐԴԳԷՍ ՍԵՐԵՆԿԻԻԼԵԱՆ, ԲԱՐՍԵՂ, ՇԱՀՊԱԶ



ՍԱՐԳԻՍ ԲԱՐՍԵՂԵԱՆ, ՅԱՐՈՒԹԻՒՆ ԳԱՆԱՅԵԱՆ
պառկած՝ ՄԱՐ



ՍԱԹԹԱՐ ԽԱՆ ԵՒ ԵՓՐԵՄ



ԵՓՐԵՄ, ԿԻՆՐ՝ ԱՆՆԱՀԻՏ, աղջիկը՝ ԱՍՏՂԻԿ



1904 թՈՒԻ ՆԻԿՈՒ ԴՈՒՄԱՆԻ ԽՈՒՄԲԵՆ ՄԱՍ ՄԸ

1.—Դաւենակցական խեչօ, 2.—Զալփափախ Գեորգ, 3.—Սարբազ
խեչօ, 4. Ռուբէն Տէր Մինասեան



ԴՐՕ, ՄԱՏԹԷՈՍ, ՔԻԻՐՏ ԽԵՉՕ
(1905ին Դաւալու, Զանգեզուր մեկնելու առեմ)



ԹԱԻՐԻՋԻ ՄԷՋ ԸՆԿԵՐՆԵՐՈՒ ԽՈՒՄԻ ՄԸ, 1897ԻՆ

- 1.— Ներսես Բալայեան 2.— Իշխան Յ. Արդուրեան 3.— Օր. Հռիփսիմէ Գուղիւնեան 4.— Վարդան Յակոբեան 5.— Սեւ Քարեցի Սաֆօ 6.— Օր. Սարենիկ Մասիւնեան 7.— Սամսոն Թադեոսեան 8.— ԲՃ. Կարապետ Փաշայեան 9.— Յովսէփ Միրզայեան 10.— Միսաք Միրզայեան



ՍԱՄՍՈՆ ԿԱՆ



Քաւրճիկի Հ. Յ. Գ. «ՄԱԲՕ» Օրիորդաց խումբը, 1904ին



ՄՕՍԷ ՄԱՅՐԻԿ



ԵՂԻՇԷ ԹՈՓՉԵԱՆ



ՄԱՐԶՊԵՏ



ՅՈՎ. ՄԷՓ ԱՐԳՈՒԹԵԱՆ



ԱԲՐԱՀԱՄ ԳԻՒԼԽԱՆԳԱՆԵԱՆ



ՀԱՎԻՐ ՕՀԱՆՋԱՆԵԱՆ



Ա. ԽԱՏԻՍԵԱՆ



ՆԻԿՈՒ ԱՂԱԿԱՆԵԱՆ



ԲԺ. Յ. ՏԷՐ ԳԱԻԹԵԱՆ



ԱՐՇԱԿ ԶԱՄԱԼԵԱՆ



ԼԻՊԱՐԻՏ ՆԱԶԱՐԵԱՆՑ



1912ին, Պերլին: Զախեն աջ.— Միսա Արզումանեան,
Աղեխանդր Մաշուրեան, Սիմոն (Սնար) Նարինեան,
Բժ. Գրիսա Սաղեան, Բժ. Ռուբեն Իզգբաշեան

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱՆ ԵՒ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ

Օսմանեան յեղափոխում.— Մեր յարաբերութիւնները «Սրիսասարդ թուրքիա» յի հետ.— Խորհրդակցութիւններ ժրնել եւ Պարիզ.— Թուրք ժողովրդական խրատներ Մեծ Հայքում.— Պարիզեան Կոնգրէն.— Մակեդոնական ռազմապարտութիւնը եւ դեպքերու գահավիժումը.— Ապստամբութիւն եւ սահմանադրութեան հռչակում.— Միքիլիներ եւ խրատներ.— Հ. Յ. Դաւենակցութիւնը հրապարակի վրայ.— Իր հաւատքի հանգանակը սահմանադրական թուրքիոյ հանդէպ.— Իրքիիասի գրգռիչ քաղաքականութիւնը եւ Մարտ 31ի համիտեան հակահարուածը.— Աղանա.— Շեքիք փառայի գրոհը եւ Իրքիիասի յաղթական վերադարձը.— Սուլթան Համիտ գահազուրկ.— «Իրքիիաս-Դաւենակցութիւն» համաձայնութիւնը.— Հայկական քաղաքականութիւններ.— Տեղափոխութեան ալիքը.— Արեւալանք Դաւենակցութեան դէմ.— «Ազատամարտ» եւ իր դերը.— Գաւառական անցումը Յեղափոխութեան նախօրէին.— Խրատութիւններ Վասպուրականում.— Դաւոյի դաւանանքութիւնը եւ մեր զինապահեստներու կորուստը.— Դեպքերու արձագանքը Սուրպայում.— «Դրօսակ» յի ազդեցական եւ դիւանագիտական միջամտութիւնները.— Վարդգէսի ողբերգութիւնը.— Ձերբակալում եւ մահավճիռ.— Միջամտութիւն Անատոլիոյ Գրանսի.— Գրանսայի վարչապետը կը փրկէ Վարդգէսը կախաղանէն.— Գեորգ Զաւուօփ վերջին կռիւր եւ նահապետութիւնը.— «Հուրիք» յի արձագանքները Հայաստանում.— Ջաբրի պատրաստութիւններ Կարնոյ մէջ.— Մեր իններուն կորովի կեցուածքը կը կանխէ աղէքը.— Սղիեք թուրքեան.—

Պատմեցինք առաջին հատորին մէջ այն բազմաթիւ փորձերը, որ ըրեր է Դաւենակցութիւնը համերաշխութեան կապեր ստեղծելու օսմանեան կայսրութեան այլ և այլ ցեղերուն, անոնց քմ-

բոստ աարբերուն հետ, Չենք մտցեր, հարկաւ, բուն իշխող ցեղը, մասնաւորապէս անոր ըմբոստ կազմակերպութիւնները— «Երիտասարդ Թուրքիան»:

Չենք կարող պատմել այստեղ այն բոլոր անհատական ու խմբական բանակցութիւնները, որ կատարուեր են 90ական թիւերէն ի վեր. Դեռ 1895-96 թուականներուն մեր ընկերները կենդանի յարաբերութեան մէջ էին Ժընեւի մէջ հաստատուած երիտասարդ Թուրքերուն հետ. Թուրք երիտասարդ մտաւորական շիւթի Թունալը (հետագային Բաքերդի Զարդի կազմակերպիչն եղաւ և յետոյ, եթէ չենք սխալիր, անգամ էնկիւրթի նորհրդարանին) կուգար յաճախ ընկերներով «Դրօշակ»ի խմբագրատունը և երկար ժամերով կը խօսէինք հայ-թրքական գործակցութեան մասին: Ունէին միշտ գրպանի մէջ Միթհատ փաշայի Սահմանադրութիւնը և կը թելագրէին մեզի՝ ընդունիլ զայն, հրաժարելով մեր մասնաւոր պահանջներէն, Յարգ յողուածէն եւ այլն: Բանկ Օտոմանի զէպէն յետոյ Թուրք ազատականները սկսան աւելի եռանդով յաճախել «Դրօշակ»ի խմբագրատունը: Օր մը եկաւ ինքը Ահմէտ Ռիզան, Երիտասարդ Թուրքիոյ մտաւորական պարագլուխը, որ կը հրատարակէր Պարիզի մէջ իր «Մէշվէթէթ»ը: Եւ նոյն պայմանը կ'առաջադրէր հայ-թուրք գործակցութեան համար. կը պահանջէր, որ Դաշնակցութիւնը հրաժարի ուրոյն հայկական դատէն, միջազգային դիւանագիտական յօդուածներէն, հրաժարի նաեւ յեղափոխական միջոցներէն— սուրի, հրազէնի, ռումբի գործածութենէն— և երիտասարդ Թուրքերուն միացած, ձգտին տապալել համիտեան բռնակալութիւնը՝ սոսկ խաղաղ միջոցներով, դրչով ու խօսքով, բողոքի ցոյցերով, հանրային կարծիքը յուզելով, Եւրոպայի բարոյական աջակցութիւնը խնդրելով և այլն:

Որոհրդաժողով մըն ալ գումարուեցաւ 1902ի Փետրուարին Պարիզի մէջ, իշխան Սաբահէդդինի և իր եղբոր նախաձեռնութեամբ և բաղմաթիւ «սոմանցի ազատական»ներու մասնակցութեամբ՝ Թուրք. քիւրդ, յոյն, ալբանացի և այլն: Սյդակեղ էր և Դաշնակցութեան մի պատգամաւորութիւն, Ահարոնեանի առաջնորդութեամբ, նաեւ հնչակեաններ ու քանի մը այլ հայ գործիչներ, Մինաս Չերազ, Բասմաջեան: Սակայն անկարելի եղաւ համաձայնութեան զալ էական խնդրին շուրջ, վասնզի

օսմանցիները ոչ միայն դէմ էին յեղափոխական տակտիկի, այլ և չէին ուզեր ճանչնալ հայկական առանձին դատմը, երաշխաւորուած միջազգային դաշնագրերով, բան մը՝ որու վրայ կը պնդէին բոլոր հայ պատգամաւորները, Վերջինները կը յայտարարէին, որ իրենք եւս կողմնակից են Թուրքիոյ ամբողջականութեան գաղափարին, ինչպէս նաեւ ջերմօրէն համակիր անոր ընդհանուր բարենորոգման (Միթհատեան Սահմանադրութիւն), կը խոստանային նոյն իսկ հայ կոմիտէներու գործակցութիւնը երիտասարդ բուրժուան «արդի (համիդեան) ռեժիմը կերպարանափոխելու նպատակով ձեռնարկուած ամեն գործողութիւն»:

Բայց և կ'աւելցնէին, որ իրենք կ'ուզեն.

Անմիջական գործադրութիւնն առաջ բերել Բերլինի Դաշնագրի 61րդ յօդուածին և 1895 թ. Մայիս 11ի Յիշատակագրին ու անոր յաւելուածին:

Անմէտ Ռիզայի կուսակցութիւնը կատաղաբար ըմբոստացաւ հայկական ուրոյն դատին և Եւրոպայի ամէն մի գործօն միջամտութեան դէմ Թուրքիոյ ներքին գործերում:

Հայ պատգամաւորները ստիպուեցան հեռանալ Համաժողովէն:

Մենք ջերմօրէն ողջունենք էինք Համաժողովի գաղափարը, Առաջին անգամը օսմ. կայսրութեան դժգոհ տարրերու ներկայացուցիչները, թիւով շուրջ 40, համախմբուելէին՝ զիրար ճանչնալու և համերաշխ գործակցութեան ծրագիր մշակելու... Բայց հայ պատգամաւորները առաջին օրէն իսկ զգացին զիրենք պաղ, անհիւրընկալ մթնոլորտի մէջ, Բուն օսմանցիները և մանաւանդ Անմէտ Ռիզա կը մատնէին ծայրայեղ անհամբերողութիւն քրիստոնեաներու հանդէպ, Դեռ որոշ յարգանք կը ցուցնէին դէպի Հ. Յ. Դաշնակցութիւնը, Մակեդոնացիները չէին հրաւիրեր այն պատճառաբանութեամբ, թէ անոնք «խռովարարներ են, Բնականաբար չէին ճանչնար մակեդոնական դատն եւս: Ապագայ երանելի Սահմանադրութենէն զատ — որ չես գիտեր, թէ ի՞նչ միջոցներով «խաղաղօրէն» պիտի իրադարձէին — անոնց գլխաւոր մտահոգութիւնն էր լուծել հայկական գաղը ընդհանուր համագումանեան բարենորոգումներու» մէջ:

Արդիւլ Համիրն ալ արդէն այդպէս կ'առաջադրէր ամէն անգամ, երբ արտաքին ճնշումներէն նեղուած, կ'ուզէր կերպով մը ձգձգել բուն հայկական ռեֆորմները:

Շատ չանցած վրայ հասան աւելի ուժեղ, զգաստացուցիչ աղաղակներ, որոնք հասկցուցին այդ ծայլ, թուլամորթ երիտասարդ թուրքիային այն տարրական ճշմարտութիւնը, թէ մարդկային պատմութեան մէջ երբեք ազգ մը առանց արիւնի, առանց բռնութեան չէ նուաճեր իր ազատութիւնը և թէ սուլթանի բռնակալութիւնը տապալել կարելի է միայն կռուով:

1907ին թուրք սովալլուկ ժողովուրդն էր, որ, չգիմանալով տուրքերու բեռին և ապրուստի յարաճուն սղութեան, խլրտաց ու ցոյցեր սարքեց իշխանութիւններու դէմ էրզրում, Վան, Բիթլիս, Տիգրանակերտ և այլուր: Էրզրումի մէջ թուրք ամբօխը անարգեց, ծեծեց, պահ մը նոյն իսկ բանտարկեց ատելի կուսակալը: Կառավարութիւնը կը պատասխանէր խմբական աքտորներով, որոնք աւելի եւս կը բորբոքէին հրդեհը: Տիգրանակերտում թուրք ու հայ ժողովուրդները կը սարքէին նոյն ցոյցերը թեւ թեւի:

Վանայ մէջ կը գործէր արդէն խառն դաւադիր մարմին մը, հայերէ և թուրքերէ: Մեր ընկերները — Արամ, Իշխան, Սարգիս, Կոմս — իրականացման շաւիղի մէջ դրեր էին հայթրքական համերաշխութիւնը: Այդ խառն մարմնի զեկավարութեան տակ շարք մը տեւորներ կ'ատարուեցան. ի միջի այլոց զարնուեցաւ Բաթումի մէջ Վասպուրականի պատուհաս դարձած նախկին կուսակալ Ալի Պէյլ: Լաւ օրեր էին... Առաջին անգամ Վանայ բանտը տեսաւ նաեւ թուրք քաղաքական յանցաւորներ:

Յեղափոխական վիճակ մը ստեղծուեցաւ քանի մը վայրերու մէջ, Աւելորդ է ըսել, որ մեր կոմիտէները ամէն տեղ առաջնակարգ դեր կը խաղային այդ ցոյցերու պատրաստութեան մէջ, մանաւանդ Վան ու Էրզրում: Եւ յեղափոխական տրամադրութիւնը սկսաւ վարակել նաեւ մեղկ, պոռոտախօս թուրք մտաւորականութիւնը .. Պէտք եղան սնթիւ, արիւնոտ ըմբոստացումներ, անհաշիւ զոհեր ողջ Փոքր Ասիոյ մէջ. պէտք եղան քսան տարուան կոչ ու յորդորներ հայ յեղափոխական մարտիկներու կողմէն, որպէս զի օսմանեան շարժման զեկա-

վարները սթափէին իրենց խոր թմրութենէն, ընդունէին կռիւ
ւը, որպէս փրկութեան գերագոյն միջոց, և այդ կռուի համար
ձեռք մեկնէին հայ յեղափոխականին:

2. Յ. Դաշնակցութիւնը զգաց այդ բեկումը Երիտասարդ
Թուրքիոյ տրամադրութեան մէջ և ստանձնեց նախաձեռնու-
թիւնը հայ-թրքական նոր ինտերդաժողովի:

Մեր Զորորդ Ընդհանուր Ժողովը վիեննայի մէջ նոյն
1907ի գարնան ընդունեց էր արդէն հետեւեալ որոշումը. —

«Ընդհանուր Ժողովը...»

«Խորին ուրախութեամբ դիտելով թուրք ժողովուրդի մէջ
ծայր տուած հակակառավարական դժգոհութեան երեւոյթները,
նպաստաւոր վայրկեանը հասած կը նկատէ համերաշխութեան
գաղափարի իրականացումը գործնական հողի վրայ դնելու, ինչ
որ դժբախտաբար ցարդ չէր յաջողած Դաշնակցութեան, հա-
կառակ տարիներէ ի վեր ձեռք առած միջոցներուն...»

«... Զգտիլ Թուրքիոյ այլ ազգութիւններու յեղափոխական
կուսակցութիւններու և տարրերու մէջ համերաշխութիւն
առաջ բերել և կազմել յեղափոխական դաշնակցութիւն մը,
Ֆեղեբասի սկզբունքի վրայ հիմնուած քաղաքական ծրագրով,
որ ապահովէ բոլոր ազգութիւններու իրաւունքը: Այս գաղա-
փարի իրականացման համար՝ առաջին պատեհութեամբ իսկ
հրաւիրել համաժողով մը վերոյիշեալ տարրերու մասնակցու-
թեամբ:

«Միեւնոյն ատեն, թուրքերու մէջ տարածուած անհիմն
թիւրիմացութիւններուն վերջ տալու համար, ժողովը պարտք
կը համարի յայտարարել, որ Դաշնակցութիւնը Թուրքիոյ մէջ
ունեցած չէ և չունի անջատական ոչ մէկ ձգտում, այլ իր նպա-
տակն է եղած ազգերու կատարեալ հաւասարութիւն և՛ տեղա-
կան լայն ինքնավարութեան սկզբունքի համաձայն՝ հայկական
վեց վիլայեթներուն մէջ վարչական ինքնավարութեան հաս-
տատումը, ինչ որ չի հակասեր միւս ազգերու իրաւունքին»:

Ընդհանուր Ժողովի ցանկացածը շուտով կատարուած իր-
շութիւն մըն էր: Նոյն 1907 թ. Դեկտեմբերի վերջերը Պարիզի
մէջ գումարուեցաւ «Օսմանեան Կայսրութեան Ընդդիմադիր»

Տարբերու կոնգրէն» (*), «Դրօշակ»ի խմբագրութեան նախա-
ձեռնութեամբ (նիստերու մէկ մասին կը նախագահէր մեր
Ակնունդին):

Ահա մէկ քանիսը այդ կոնգրէի որոշումներէն. —

1. Գահընկէց ընել Սուլթան Համիդը:
2. Հաստատել ներկայացուցչական ռեժիմ, իրերդարան:
3. Զինուած դիմադրութիւն կառավարութեան քայլերուն:
4. Տուրքերու մերժում:
5. Պրոպագանդ զօրաբանակին մէջ:
6. Ընդհանուր ապստամբութիւն:
7. Կազմել գազանի միայուն խառն կոմիտէ, բազկացած
այն կազմակերպութիւններու ներկայացուցիչներէն, որոնք կը
գործեն կայսրութեան ներքը:

8. Ուժեղ զարկ տալ երկրի մէջ հակակառավարական և
յեղափոխական պրոպագանդին, հրատարակելով թուրքերէն,
հայերէն, յունարէն, բուլղարերէն, ալբաներէն, արաբերէն և
քրդերէն լեզուներով գրքոյկներ . . .

Յրանսիս դը Պրէսանսէ իր խնդակցութիւնը կը յայտնէ
Համաժողովի առթիւ «Պրօ Արմենիան»ին ուղղած իր նամակին
մէջ, որ կը վերջանար այս բառերով.

«... ներկայիս, երբ բարոյական այնքան սնանկութիւններու
դէմ ունեցած ատելութիւնս ինձ չի տրամադրեր լաւատեսու-
թեան, կը սպասեմ, վստահութիւնով, Արդիւ Համիդի դէմ ողջ
Արեւելքի այս զօրաշարժի արդիւնքին, առանց խտրութեան
ցեղերու և կրօններու»:

Իսկ Պիէռ Քիլեան «Դրօշակ»ին ուղղած իր շնորհաւորական
գրութիւնը այսպէս կը վերջացնէր.

«... Հայ յեղափոխականներն էին, որ իրենց հերոսական
կռիւններով սարվեցուցին փրկութեան միակ ուղին, ուր այժմ
ամէնքն ալ վճռականօրէն առաջ կը խաղան:

«Յարգանք յեղափոխականներուն, որոնք այդ գերագոյն
կռուին մէջ իրենց հետ ունին Եւրոպայի և ողջ աշխարհի իրենց

*) Հ. Յ. Դասնակցութեան հետ կը մասնակցէին Համաժողովին «Մի-
ուրիւն և Յառաջդիմութիւն» (Իրքիմաս) բուրժուական կուսակցութիւնը՝ Ահմէտ Ռիզայի
գլխաւորութեամբ, եւ իօխան Սաբանդղիյի կուսակցութիւնը, որու պաշտօնական
օրգանն էր «Թէրազոր»:

բարեկամներուն ջերմեռանդ և ակընդէտ համերաշխութիւնը:

* * *

Թուրք աշխարհի ներքին շարժումներուն շուտով միացաւ արտաքին զօրաւոր արդակ մը, որ փութացուց յեղափոխութեան բռնկումը:

Մակեդոնական ճագնայը հասաւ իր բորբոքման գագաթնակէտին: Պետութիւններու, մասնաւորապէս Անգլիոյ և Ռուսիոյ մէջամտութիւնները մէկէն ի մէկ բուռն կերպարանք ստացան, և արդէն իսկ հորիզոնին վրայ կը նշմարուէր Մակեդոնիայի անջատման և Թուրքիոյ նոր անդամահատման հեռանկարը: Այդ եղաւ ամենէն ուժեղ զարկը Թուրք դիմադրական տարրերուն համար: Երիտասարդ Թուրքիան սկսաւ բուռն քարոզչութիւն բանակի մէջ, մասնաւորապէս Մակեդոնիայում: Պարիզի աննախընթաց Համաժողովի որոշումները հազարաւոր օրինակներով կը տարածուէին սպաներու և բոլոր դրագէտ շրջաններու մէջ և ցանկալի տպաւորութիւն կը գործէին... մասնաւորապէս Համաժողովի վճիռը՝ գահընկէց ընելու Սուլթան Համիդը:

Եւ ահա, Պարիզեան Համաժողովէն քանի մը ամիս յետոյ, Մակեդոնիոյ Թուրք բանակը, ի դէմս իր ամենէն խիզախ առաջնորդներու՝ Էնվերներու և Նիազիներու՝ պարզեց ապստամբութեան գորշը և պահանջեց Սուլթանէն — Սահմանադրութիւն (1908 թ. Յուլիս): Ապստամբութեան ալիքն անցաւ Ադրիանուպոլիս (Էտիբնէ):

Շատ մը բարձր կառավարական և զինուորական պաշտօնեաներ տեղորի ենթարկուեցան ապստամբներու ձեռքով:

Ելլողը, սահմակած՝ շանթահարող անակնկալէն, քանի մը ապարդիւն փորձեր ըրաւ ինքզինու շարժումը և ի վերջոյ տեղի տուաւ:

Ապստամբութիւնը յաղթական էր, և ամենուրեք ննչեցին կարմիր, հմայիչ կարգախօսները — Սահմանադրութիւն, ազատութիւն, ցեղերու եղբայրութիւն... «Հուրիէթ»...

Կարմիր Սուլթանը անուշ ժպիտով ընդառաջ գնաց երիտասարդ Թուրք պարագլուխներուն և ուխտեց հաւատարիմ մնալ Սահմանադրութեան: Բանտերու դռները բացուեցան և հազու-

բաւոր հայ, Թուրք ու այլ բանտարկեալները ցնծութեան ազա-
 ղակներով գուրս Թուան իրենց զնդաններէն: Տեղի ունեցան
 հսկայ Թափօրներ, ուր իսլամ ու քրիստոնէայ կ'ողջագուրուէին
 ու մէկտեղ խրախճանքներ կը սարքէին: Թուրք պարագլուխ-
 ները բարձրաձայն կը յայտարարէին իրենց բուռն համակրան-
 քը բաղմաշարչար հայութեան և իրենց գաղափարային եղբայ-
 րակցութիւնը. կը խոստովանէին հրապարակաւ, որ հայ յեղա-
 փոխականները իրենց վարպետներն ու զաստիարակներն եղած
 են ազատութեան ճամբուն վրայ... Միթհատ փաշայի և Գրիգոր
 Օտեանի ստուերները ոգեկոչուեցան բաղմաթիւ միթինկներու
 մէջ, Թուրքիան հռչակուեցաւ սահմանադրական երկիր՝ արեւ-
 մտեան կաղապարով.— Խորհրդարան և պատասխանատու նա-
 խարարութիւն, անձի անձեռնմխելիութիւն, ինչքի և պատուի
 ապահովութիւն, խօսքի, մամուլի, դաւանանքի ազատու-
 թիւն և այլն:

Ողջ Պոլիսը կը ծփար անօրինակ խանդավառութեան մէջ:
 Հայոց Ազգային Ժողովը հրաժարեցուց Օրմանեան պատրիարքը, և
 Երուսաղէմէն ետ բերուեցաւ աքսորական Իզմիրեանը, որուն
 մուտքը Կ. Պոլիս կատարուեցաւ արտակարգ շուքով, ժողովըր-
 դական խելայեղ ցոյցերու մէջ: Պոլիս մտան, մեր ընկերնե-
 րուն հետ, հինաւուրց տարագիրները՝ Մ. Փոթթուզալեան ու
 Մինաս Չերազ:

Պոլսոյ շրջակայ վայրերուն մէջ Հ. Յ. Դաշնակցութիւնը կը
 կազմակերպէր ժողովրդական բաղմամարդ միթինկներ: Անհրա-
 ժեշտ գործ մըն էր այդ առաջին օրերու մէջ՝ փոթորկելու հին
 սեփմի հայկական ճահիճը, նոր խօսքը փողահարելու և գաղա-
 փարական երիտասարդութիւնը մեր շարքերում զինուորագրե-
 լու համար: Այդ միթինկային քարոզչութեան հոգին էր Ակնու-
 նիսն, Պարիզեան Կոնգրէի առաջնակարգ դէմքերէն մէկը, որ
 Պոլիս մտաւ Յեղափոխութեան սկիզբներուն: Ահա թէ ինչ կը
 գրէր մեր եղբարքախա ընկերը իր առաջին նամակին մէջ (1908
 թ. Օգոստոս 8), ուղղուած Պոլսէն Իրօսակի խմբագրութեան.

«Ձէք կարող երեւակայել, թէ որքան ուրախ եմ, որ կարող
 եմ ձեզ գրել այս քաղաքից, առանց երկիւղ կրելու երէկուան
 ամենազօր լրտեսութիւնից, մի քաղաքում, ուր 32 տարի փակ-
 ուած բերանները մի գլուխ շաղատութիւնն են գոչում... Ամ-
 բոյսը պինովցած է: Թող այդպէս լինի: 30 տարի լռելուց յե-

տոյ, 30 օր կարելի է գոռալ ու գինովնալ... Երբ կը վերադառնան
ռէակսիոնի սեւ օրերը, նորից կարող կը լինենք մտնել «լու-
թեան ակումբը»:

Բերկրանքով ողջունեցինք Օսմանեան Սահմանագրութիւնը.
ոչ մի անջատական ձգտում, ոչ մի խօսք այլ եւս եւրոպական
միջամտութեան, ՅԱԲԳ յօդուածի մասին. դադրեցուցինք «Պրօ
Արմենիան» ու եւրոպական պրոպագանդը, լծուելով մեր խլամ
դրացիներուն հետ՝ ընդհանուր ուժերով սատարելու ողջ կայսրու-
թեան յառաջդիմութեան և բարօրութեան:

* * *

Մեծ էր օսմանեան յեղափոխութեան տպաւորութիւնը նաեւ
արեւմտեան աշխարհի մէջ. Բնկերվարական և ղեմոկրատ մա-
մուլը ներքողալից յօդուածներ նուիրեց: Ժողէս կը յորդորէր
մեզի՝ համերաշխ քալել իթթիհատին հետ, զոր կը նկատէր որպէս
միակ կազմակերպուած ուժը թուրք-մահմետական աշխարհում:
Բնկերվարական միթիւնկներու մէջ՝ Վիեննա, Բրիւսէլ և այլ
մայրաքաղաքներում — ուր Ն. Յ. Դաշնակցութիւնը կը հան-
դիսանար օսմանեան ազատագրութեան բանբերը — խանդա-
վառութեամբ կը քուէարկէին բանաձեւեր ի նպաստ արեւելեան
նորածին Սահմանագրութեան: Յիշատակելի է մասաւանդ 1908
Հոկտեմբեր 10ի մեծ ջոյքը Բրիւսէլի Maison du Peupleի մէջ.
ուր տեղի կ'ունենային Բնկերվարական Ինտերնասիոնալի Բիւ-
րոյի նիստերը՝ կարլ կառնցկիի, Վիկտոր Ադլէրի, Պերներստոր-
ֆերի, Հայնդմանի, Վայեանի, Ռուբանովիչի, Լենինի և այլ
խոշոր պարագլուխներու մասնակցութեամբ: Օսմանեան Յեղա-
փոխութիւնը իրիկուան բազմամարդ միթիւնկի մեխն էր, որուն
նուիրուեցաւ Ն. Յ. Դաշնակցութեան ներկայացուցչի ճառը: Եւ
ատկէ վերջն էր, որ ժողովի միաձայն որոշումով՝ ազատագրուած
Հայաստանը, ի զէմս Ն. Յ. Դաշնակցութեան, արտօնութիւն
ստացաւ այնուհետեւ իր ուրոյն ներկայացուցչութիւնն ունե-
նալու Բնկերվարական Ինտերնասիոնալի մէջ*): Կորս ձայնի
իրաւունքով:

*) Մեր խօսքը, բնականաբար, Երկրոյ Ինտերնասիոնալի մասին է, հիմնուած
1899ին: Մինչեւ Բրիւսէլի ժողովը, «Իսթանպուլեան Կովկասեան Հասուածք» մի-

Ապա, Դը Բըուկերի ձառէն յետոյ, բանաձեւ ժը քուէարկուեցաւ, որ սրտագին ողջոյն մըն էր Ինտերնասիոնալի կողմէն Թուրքիոյ ժողովուրդներու ազատագրութեան:

* * *

Բոլոր օսմանցի ժողովուրդները սկսան կազմակերպուիլ քաղաքական ազատ կեանքի համար, իւրաքանչիւրը իր ուրոյն պահանջներով: Ահաւասիկ Հ. Յ. Իշանկցութեան էական պահանջները, ձեւակերպուած յատուկ շրջաբերականի մէջ.

Համոզուած՝ որ ամէն մէկ պետութեան և մանաւանդ օսմանեան կայսրութեան նման բազմալեզու երկրի մը քաղաքական լաւագոյն կազմը ֆեդերատիւ-ապակեդրոնական ձեւն է, երբ աշխարհադրական-տնտեսական-ազգագրական ուրոյն գիմագիծ ունեցող բոլոր շրջանները պիտի վայելեն ներքին վարչական-օրէնսդրական ինքնավարութիւն, որ առուել եւս ներդաշնակօրէն կ'ուժեղացնէ ու կ'ամրապնդէ պետական ամբողջ կազմը:

Գիտակցելով նոյնպէս, որ այդ նպատակներուն կարելի է հասնիլ աստիճանաբար, արմատական ռամկավար բարեփոխութիւններու միջոցով և համեմատելի գործակցութեամբ հարեւան ազգերու և միւս կուսակցութիւններու հետ, այլեւ ցանկալով ապահովել նոր ռեժիմը՝ անբաղձալի ցնցումներէ:

Հ. Յ. Իշանկցութիւնը ներկայիս և օսմանեան պարլամենտի առաջին նստաշրջաններուն համար կ'առաջարկէ ստորեւ

այն մօտ էր Միջազգայինի գիրկը եւ այն՝ իրեւ համառուսական Ս.—Յ. կուսակցութեան մէկ նիւղը (sous-section):

Հ. Յ. Գ. Խորհուրդը 1908 թ. Մարտ 12—25ի իր նիստերու ընթացին հետեւեալ սրբուսմն էր ընդունէր Ինտերնասիոնալի վերաբերմամբ.

«Լսելով զեկուցում Դեան մասնակցութեան վերաբերեալ Շուտցարտի սոցիալիստական միջազգային կոնգրէսում, Խորհուրդը զրադուեց այն հարցերով, թէ արդեօք պէ՞տք է մնալ ռուսական սեկցիայի մի հասուած, ինչպէս այժմ է, թէ՞ պիտի ձգտել ձեռք բերելու ձայներ նաեւ Թուրքահայաստանի համար եւ կազմելու հայկական անկախ սեկցիա, իրեւ ներկայացուցչութիւն թէ՛ կովկասահայերի եւ թէ՛ քրճահայերի, Ռուսեց՝

ա. Աւխասեյ սսանալ ձայներ Թուրքահայաստանի՝ համար եւ կազմել հայկական սեկցիա:

բ. Յանձնել այդ սրբուսմն իրագործուսմբ Արեւմտեան Բիւրոյին, յանձնարարելով անել հարկ եղած զինումները, ըստ կարելոյն շուտ:

առաջադրուած անհրաժեշտ և ներկայ իրականութենէն թելադրուած պահանջները.—

1) Օսմանեան կայսրութիւնը, քանի կ'ունենայ սահմանադրական ռազմավար ռեֆորմ, պիտի ճանաչուի անկախ ու ամբողջական:

2) Թուրքաց Հայաստանը կը կազմէ կայսրութեան անբաժան մասը և կը վարէ իր տեղական գործերը, հիմնուած ազակեղրոնացման սիստեմի վրայ, որմէ հաւասար կերպով պիտի օգտուին երկրի մէջ ապրող բոլոր ազգերը:

3) Օսմանեան կեղրոնական կառավարութիւնը, հիմնուած ժողովրդական ներկայացուցչութեան սիստեմի վրայ, կը վարէ պետութեան ընդհանուր գործերը, — արտաքին քաղաքականութիւն, զօրք, դրամ, մաքս, երկաթուղի, պոստ-հեռագիր եւ այլն, տեղական միւս ֆոնդսիոնները թողնելով շրջաններուն:

4) Պարլամենտական, դատաստանական և տեղային վարչական բոլոր մարմինները պիտի ընտրուին ընդհանուր, հաւասար, գաղանի և համեմատական ձայնատուութեան սկզբունքով: Այս սկզբունքը կը գործադրուի բոլոր ազգերու և կրօններու համար հաւասարապէս:

8) Կատարեալ հաւասարութիւն բոլոր ազգերու և կրօնական համայնքներու: Ոչնչացում դասակարգային կերպարանք ունեցող բոլոր առանձաշնորհներու:

9) Սահմանադրութեան վերաքննութիւնը ապակեղրոնացման մտքով:

Նախարարութեան պատասխանատուութիւն օրէնսգիր ժողովի առջեւ:

Փահակալը կ'երդնու, զօրքի հետ միասին, հաւատարմութիւն և անխախտ պահպանում Սահմանադրութեան:

Վերացում վերին ժողովի (Այան, Մերակոյա):

Փոփոխումն այժմեան ընտրողական սիստեմի՝ մտցնելով ընդհանուր ձայնատուութիւն:

10) Անխախտ պահպանումն խօսքի, մամուլի, խղճի, ժողովներու, գործադուլներու ազատութեան:— Անձեռնմխելիութիւն անձի, բնակարանի, նամակագրութեան, Ազատութիւն տեղափոխութեան, վերացում ներքին անցագրերու:

11) Ընդհանուր, պարտադիր և ձրի սկզբնական ուսում:

Դատատուութիւն մայրենի լեզուով ազգային դպրոցներու մէջ:

Պետական լեզուի ուսուցումն չորրորդ տարու ընէ:

Թրքական դրոցներու մէջ տեղական լեզուներու դաստառ-
ւութիւնը պարտաւորիչ է, նոյն տարու ընէ:

12) Կրթական-դպրոցական նպատակներու յատկացուած
բիւդձէն բաժանել առանձին ազգութիւններու միջեւ, համաձայն
ազգաբնակչութեան թուի: Գործադրութիւնը պիտի ձգուի յատ-
կապէս այդ նպատակի համար ընտրուած մարմիններուն:

14) Դատարաններու հիմնական վերակազմութիւն: Զրի
դատավարութիւն:

15) Հաւասարութիւն գինուորագրութեան՝ պետութեան բո-
լոր ազգութիւններուն համար, առանց կրօնի խտրութեան: Զինուորական ծառայութեան տեւողութիւնը, ներկայ պայման-
ներուն մէջ, իջեցնել երկու տարուան:

17) Ապահովել, պետութեան հաշուով, հողի որոշ տարածու-
թիւն ամէն մի գիւղացու: Պետական և արքունական հողերը
դարձնել համայնքներու սեփականութիւն:

20) Հանքերը, ինչպէս և արտաքոյ կարգի արժէք ունեցող
բնական այլ հարստութիւնները կը համարուին պետական սե-
փականութիւն, և առանց եկամուտներու որոշ մասը կը գոր-
ծածուի տեղական համաժողովրդական-կրթական նպատակներու
համար:

21) Հարկային սիստեմի հիմնական փոփոխութիւն:

Մանօթ.— Ներկայ պայմաններուն մեջ, անմիջապէս
պակսեցնել ածարբ, սահմանափակելով բերքի 1/15ով,
աղւնամբ՝ 1/3ով:

Յետամնաց տուրքեր պիտի չգանձուին:

Վերացումն նանապահային, Հիւնագի, գաղթական-
ցային եւ այլ մանր տուրքերու:

Վերացումն դասասանական փուլերու եւայլն:

Անմիջական վերացումն օլամի, բեզարի եւ այլ չվար-
ձատրուող ափսասանքներու:

22) Յառաջատուական տուրք եկամուտի և ժառանգութեան:
Հարկէ բոլորովին ազատել որոշ չափէ պակաս եկամուտ ունե-
ցողները:

23) Պետական ամենամատչելի վարկ:

24) Պետական ապահովագրութիւն երաշտի, կարկուտի,
մարտի, հեղեղի և այլ պատահարներու դէմ:

25) Հաստատում աշխատանքի նախարարութեան: Աշխատ-

տանքի օրէնսդրական կարգաւորումն և հովանաւորութիւնն
ա) Աշխատանքի ժամերու որոշում բանուորներու համար,
թէ՛ քաղաքներու և թէ՛ գիւղերու մէջ, Առողջապահական տեսա-
կէտէ առանձնապէս վտանգաւոր և վնասակար գործերու համար
աւելի պակաս:

բ) Վերցնել կանանց և երախաներու գիշերային աշխատան-
քը, կանայք ազատ պիտի ըլլան աշխատանքէ՝ ծննդաբերութենէ
վեց շաբաթ առաջ, Արգիլել երախաներու աշխատանքը մինչեւ
15 տարեկան հասակը, իսկ 15էն մինչեւ 18 տարեկան հասակը՝
սահմանափակել օրական 6 ժամով, Վերցնել պայմանաժամէն
դուրս աշխատանքը, Արգիլել աուգանքի ձեւի տակ օրավարձի
նուազեցումը:

գ) Կիրակնօրեայ լիակատար հանգստութիւն, մէկն մի
կրօնի պատկանողներուն, իրենց կրօնի յատուկ շաբաթական
Կիրակի օրերը:

26) Բանուորներու ապահովագրումն՝ դժբախտ պատահար-
ներու, հիւանդութեան, ծերութեան և անաշխատութեան դէմ,
պետութեան և գորածատէրերու հաշուին:

1 Սեպտեմբեր 1908

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

Կ. Պոլիս

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴ

Շատ չանցաւ, հայ շրջաններու մէջ ծայր տուին կասկածն
ու վհատութիւնը, Դեռ չէր ջախջախուած բռնապետութեան
հիգրան, ողջ էր անոր գլուխը և մերթ ընդ մերթ կատաղա-
բար կը ցուցնէր իր թունաւոր ժանիքները, կանգուն էին ար-
քայապաշտ, արիւնարբու վոհմակները և պատեհ առիթի մի-
այն կը սպասէին խեղդելու «գեաւորներու ձեռքով բերուած»
Հուրիէթը... Երիտասարդ թուրքիան չուզեց սկզբից դահա-
ղուրկ ընել Համիդը, որ գառան մորթ հագած կը նախագահէր
Մահմանադրութեան խրախճանքներուն, Հ. Յ. Դաշնակցութեան
Պոլսոյ Գործադիր Մարմինը պարտք սեպեց զգաստացուցիչ
յայտարարութիւն մը ուղղել Բ. Դրան, կ'ոտարութիւններուն
ու բոլոր յեղափոխական կուսակցութիւններուն, որով կը պա-
հանջէր ի կատար ածել Պարիզեան կոնգրէի որոշումները և
ամենէն առաջ՝ հեռացնել Երլզըզէն Կարմիր Սուլթանը: Բայց

Անմէտ Ռիզա և թուրք Օյեղափոխական» պարագլուխները հաշտուներ էին իրենց վաղեմի դահիճին հետ և կը սիրաբանէին անոր հետ: Իսկ թագակիր մարդասպանը կ'որոճար իր դաւը, կը պատրաստէր իր «պետական հարուածը», կը սպասէր պատրուակի մը:

Իսկ պատրուակներ իշխող կուսակցութիւնը կը մատակարարէր շարունակ իր գրգռիչ քաղաքականութեամբ: Գինովցած իր տռաջին յաղթանակով, կռթնած իր հաւատարիմ բանակին վրայ, Իթթիհատը հաստատեր էր կուսակցական դիկտատորութիւն: Նա իւրացուցեր էր վատթարագոյն նացիոնալիզմի, աղքատամոլութեան հաւատամքը և կը ձգտէր ձուլել բոլոր այլազան ցեղերը օսմանցիութեան մէջ, ստեղծել օսմանեան կայսրութեանն ոչ միայն մէկ պետութիւն, այլ և մեկ ազգ — օսմանեան ազգը:

«Այստեղ չկայ հայ, յոյն, բուլղար, ալբան, արաբ, ամէնքն ալ օսմանցի են» — քանիցս այդ անմիտ բառերով թուրք կորհրդարանի զգիտունն նախագահը — Անմէտ Ռիզա — սաստեր, նախատեր էր այս կամ այն երեսփոխանը: Ի զուր ոչ-թուրք երեսփոխանները և Իթթիհատի հակառակ թուրքեր կ'աղաղակէին, թէ միութիւնը տարբեր ցեղերու ներդաշնակ այլազանութեան մէջ է և թէ օսմանեան պետութիւնը կարող է իրօք յառաջդիմել ու բարգաւաճել միայն այն պարագային, երբ անոր այլացեղ հատուածները կը վայելեն որոշ չափով ինքնավարութիւն:

Միութիւն ըսելով, Իթթիհատ կը հասկնար պարզապէս ձուլում... տաճկութեան մէջ, եւ այդ նպատակով նա կերտեց բացարձակ կեդրոնացման մէկ սիստեմ՝ թուրք տարրի գերակայութեամբ (հեգեմոնի): Արդարեւ, 8—9 ամսուան Իթթիհատեան իշխանութիւնը կը յատկանշուէր պաղ անտարբերութեամբ դէպի ոչ-թուրք ազգերու կենսական պահանջները: Հայ տարրը հին ռեժիմի մեծագոյն զոհն էր, բայց մենք չտեսանք դիկտատոր-կոմիտէի կողմէն որեւէ լուրջ ու շիտակ փորձ՝ դարձանելու այդ տարրի արիւնահոտ վէրքերը: Հայաստանի մէջ գեռ կը վիտային պաշտօնական համազգեստով հին ռեժիմի հայտեսաց սպասաւորները, նոյն իսկ յայտնի Զարդարարներ... Անոնցմէ շատեր բազմած էին նոյն իսկ Օսմ. կորհրդարանին մէջ: Ոչ մի լուրջ փորձ՝ մաքրագործելու, թարմացնելու վարչական, ստիկանական, դատաստանական միջնորդութիւնը: Ամէն ինչ կը

մնար ըստ հնոյն «Հուրիէթը» միայն կար, խօսքի, մամուլի երթեւեկի ազատութիւնը, որ, անշուշտ, մեծ բարիք մըն էր, բայց քիչ կը սփոփէր թշուառութեան մէջ զեզերող մեծ զանգուածը:

Փրզուութեան քաղաքականութիւնը յառաջ տարուեցաւ նաեւ իթթիհատի հակառակորդ կուսակցութեան գէմ — Ահրարներու: Հայրենիքի դաւաճան հռչակուեցան բոլոր անոնք — քրիստոնեայ թէ իսլամ — որոնք պաշտպան էին ապակեղրոն սխտեմի և ազգերու իրաւահաւասարութեան: Թուրք, արաբ ու այլ Ահրարները կատաղարար կը բողոքէին:

Մթնոլորտը երեկտրականացեր էր և կայծի մը կը սպասէր բռնկելու համար: Այդ կայծն եղաւ «Աերբեստի» խմբագրի սպանութիւնը: Ոճրագործը չգտնուեցաւ: Բայց ամէն ոք կը ճանչնար զայն... Գիտէին, որ քաղաքական ոճիր մըն էր այդ, որ նպատակ ունէր ոչնչացնել իշխող հատուածի և անոր ապիկար քաղաքականութեան արիասիրտ ու տազանդուոր խարագանողը:

«Ճնցող պատրուակն» ալ հասաւ այդպիսով և կարմիր Սուլթանը, որ Երզրզի իր կղզիացումէն դիւային հոտառութեամբ ուշի ուշով կը գիտէր կուսակցական արիւնոտ մրցումներու կրկէսը, որոշեց շեփոթել իր արքայական «հատուցման» ժամը, տապալել իթթիհատը: Ահրարներն ալ կոյր գործիք եղան Համիդի ձեռքը... Ամէն միջոց լաւ էր անոնց աչքին՝ ատելի կուսակցութիւնը հարուածելու համար: Բայց հակայեղափոխութեան առաջապահը եղան սոփոսաներու վոճակները և ամէն տեսակ համիդականներ, որոնք շերիաթի դրօշը պարզած՝ շարժեցան «մահ Հուրիէթին ու գեալուրին» ոռնոցներով և կաշառուած ու յետագէմ զինուորականներու աջակցութեամբ դուրս քշեցին իթթիհատական կառավարութիւնը և վերստին բազմեցուցին Համիդը իր միահեծան բռնապետի գահին վրայ (1909 Մարտ 31ին):

Շուտով, սակայն, նորէն հասաւ Մակեդոնիոյ յեղափոխական բանակը Շէվքէթ փաշայի հրամանատարութեամբ, որ այս անգամ գահընկէց ըրաւ զաւաղիր Սուլթանը և արսորեց զայն Մակեդոնիոյ մէկ խուլ անկիւնը, Սելանիկ, ուր և պիտի մեսնէր տարիներ յետոյ այդ ծնեալ ոճրագործը:

Պարիզեան Կոնգրէի որոշումը այսպիսով, վերջապէս, իրագործուեցաւ: Աքգիւլ Համիդ մի անգամ ընդմիշտ չքացաւ հրապարակէն և սփոփանքի հոտաչանք մը անցաւ հայ աշխարհէն:

Աւաղ... մեզի դարձեալ վիճակուած չէր ուրախութեան ծափ գարնել անգամ այդ վայրկեանին, երբ հայ ժողովուրդի անգութ դահիճը ուշակորոյս կը թաւալէր ազատութեան բանակին առջեւ և լէշի պէս դուրս կը նետուէր իր մահաբոյր ապարանքէն: Մինչ Պոլիսը ազատութեան խրախճանքներ կը կատարէր, անդին տեղի կ'ունենար կիլիկիոյ կոտորածը, ամբողջ հայկական գաւառ մը կը վերածուէր մոխրակոյտի ու սպանգանոցի... Համիդականներու գործն էր: Անարգ վեհապետը ծրագրեր էր անգամ մը եւս հայու արիւնով ողողել երկիրը, եւրոպական միջամտութիւն յարուցանել... իր գահը ամրապնդելու կամ թուրքիան իսպառ կործանելու նպատակով: Համիդականներու գործն էր, բայց հետագային պարզուեցաւ, որ Ատանայի եղեռնին մէջ — ուր 30,000 նոր հայ զոհեր եկան խտացնելու հիներու շարքը — բնաւ անմասն չէին եղած իթթիհատական իշխանութիւնները: Իսկ կեդրոնական իշխանութիւնը այդ սեւ օրերուն կը մատնէր շնական անտարբերութիւն: Ոչ մի զայրոյթ, բողոք կոտորածի առթիւ: Դեռ լուր կը պտըտցնէին, նոյն իսկ Ազանայի պաշտօնական շրջաններէն, թէ հայերն են եղեր նախարարձակ և հայ յեղափոխականներն էն մեղաւորը ... *):

Թուրք պարլամենտն ալ քաջութիւն չունեցաւ խարանելու կատարուած ոճիրը: Ընդհակառակն, ճնշող մեծամասնութեամբ նա իր համերաշխութիւնը կը յայտնէր Ատիլ բէյին: Ոմանք նոյն իսկ կը ծափահարէին կռուավարութեան ներկայացուցչի անպատկառ յայտարարութիւնները: Դաշնակցութեան երեսփոխաններէն Վարդգէս, խորապէս վրդովուած այդ տեսարանէն, իր բուռն ցասումը յայտնեց Երեսփոխանական Ժողովին և ձգեց սրահը: Դաշնակցական երեսփոխաններու պահանջին վրայ,

*) Օսմանեան ներքին գործոց նախարարութիւնը պարտ սեպեց արդարանալ «Իրօակ»ի խմբագրութեան առջև, որ բողոքի հեռագիր դրկած էր Օսմանեան կորուստեան Աղանայի դէպքերուն եւ «հայ յեղափոխականներու յանցանորութեան» առթիւ: Ժընեւի թուրի դեսպանը յանձնեց խմբագրութեան նախարարի այդ արգաւազման թուղթը, որու մէջ կը հաւաստէր մեզի, որ իբր թէ Ասիլ բէյ այնպիսի հեռագիր չէ դրկած Աղանայի վալիին, եւ կը վերջացնէր հաղորդագրութիւնը այս խօսքով:

«Եթէ խռովութիւնները անկարելի եղաւ նեւել անմիջապէս, պատճառն այն է, որ — ինչպէս նասասուած է անժխտելի փաստերով — նամբուած գործ չէր կատարուէր ժամանակին սեղ հասնիլ, մեծ տարածութեան ընդհանրութիւնը»:

կառավարութիւնը Ադանա զրկեց խառն Բննիչ Եանձնաժողով մը, Պապիկեանի նախագահութեամբ:

Թանձր ստուեր մը իջաւ ժէօն-թրքական «Հուրիէթ»ի վրայ: Հայ շրջանները սահմակած էին: Վախ կար, թէ Ադանան վերջին խօսքը չէր թուրք համիդական շարժումին և թէ ջարդի ալիքը պիտի անցնէր դէպի Մեծ Հայքը: Այն կողմերէն ալ ահազանգը կը հնչէր արդէն...

Ի՞նչ ընել, կասկածը մտեր էր մեր շարքերուն մէջ իթթի-հատի քաղաքականութեան հանդէպ, բայց այդ ահաւոր օրերուն, իսլամի փոթորկայոյզ ծովին մէջ, ուր բուռ մը հայութիւնը, ամէն կողմէ պաշարուած ու վտանգուած, կը տարուբերէր տաշեղի պէս, փրկութեան միակ խարխսիւր դարձեալ նա էր — իթթիհատը: Չէ՞ որ այդ կազմակերպութիւնն եւս արիւն թափեր էր ազատութեան համար և կ'ուզէր թուրքիոյ խաղաղ բարգաւաճումը սահմանադրական կարգերու մէջ, կար կորիզ մը թուրք յեղափոխականներու շարքերում — անկեղծօրէն ազատասէր և սահմանադրական... թէպէտ և շրջապատուած, տարաբախտաբար, ամէն տեսակ կասկածելի տարրերով, «կորիզ»էն էր ինքը իթթիհատի մտաւորական պարագլուխը, Ահմէտ Ռիզա, զոր կը ճանչնայինք հին օրերէն. մոլեռանդ թուրք, այո՛, թրքական գերակայութեան ու բացարձակ կեդրոնացման խնոյեան, հակառակորդ ինքնավար Հայաստանի, բայց և Սահմադրութեան ու խաղաղ յառաջիմութեան համոզուած պաշտպան *):

Այդպէս խորհեցան Դաշնակցութեան ղեկավարները: Եւ իրենց սիրտը կարծրացնելով Կիլիկիոյ սարսափներուն ու կառավարութեան նենգութիւններուն առջև, մերոնք որոշեցին նորէն ժպտերես դիմաւորել երիտասարդ թուրքերը — faire bonne mine à mauvais jeu — շարունակել բարեկամական յարաբերութիւնները իթթիհատ կուսակցութեան հետ, որ նորէն տէր էր կացութեան և նոյնպէս կը փնտոէր Դաշնակցութեան բարեկամութիւնը **):

*) Տարաբախտաբար՝ ոչ բաւականաչափ զօրուոր իր մեկով ու կամով, որպէսզի կարենար դիմադրել Քալաթքերու, Էնվերքերու շահասկոյրիւններուն...

**) Շատերու մէջ այն պատճառն էր կար. թէ Իթթիհատի կոմիտէները իրօք տնտես են Ալանայի ողբերգութեան: Դեռ լոյս չէ տեսնուելու եղերաբախտ Պապիկեանի լճնուրէն արդիւնքը: Իթթիհատ կ'ուսումնասիրուէր չէր թոյլ տար հրատարակել զոյն, եւ միայն

Եթէ Իթթիհատը միակ կազմակերպուած, զօրաւոր կորիզն էր իսլամ աշխարհում, — Դաշնակցութիւնն ալ երկրորդ խոշոր ու հեղինակաւոր կազմակերպութիւնն էր թէ՛ հայկական վիւայէթներուն և թէ՛ բուն Թուրքիոյ հայաբնակ վայրերուն մէջ:

Հինգերորդ Լնդհանուր Ժողովը, գումարուած 1909ի Սեպտեմբերին, խորապէս գիտակցելով նոր Ազանաներու վտանգը, հետեւեալ որոշումը կուտար. —

«... Նկատի առնելով... որ Թուրքիոյ վստահելի տարրերը — շահագրգռուած իրաւակարգը արմատացնելու գործի համար — համախմբուած են Իթթիհատ վէ Թերազգը կազմակերպութեան մէջ, որոշեց՝

Շարունակել համագործակցիլ Իթթիհատի հետ ընդհանուր ձեռնարկներու և երկու կուսակցութիւններու ներկայացուցիչներէ կազմուած խառն կոմիտէներու միջոցով... դուրս չգալով Լնդհ. Ժողովի գծած ուղղութենէն»:

Եւ քիչ յետոյ Օսմանեան կայսրութեան երկու մեծագոյն քաղաքական կուսակցութեանց միջեւ կնքուեցաւ հանդիսաւոր ու խտ մը, հետեւեալ յայտարարութեամբ. —

«Հայրենիքի ազատութիւնը ապահովելու, անոր հողային ու քաղաքական ամբողջութիւնը մշտապէս պահպանելու, կարգ մը անձերու մէջ գոյացած թիւրիմացութիւնները փարատելու և օսմանեան տարրերու միջեւ լաւագոյն յարաբերութիւններ հաստատելու նպատակով, «Իթթիհատ-Թերազգը» կուսակցութիւ-

1913 թուականին էր, որ հայոց ձեռքով հրատարակուեցաւ հայ երեսփոխանի ցեցող տեղեկագիրը, որ նիւթ դարձաւ արեւմտեան մեծ մամուլի — «Յայդա»ի, «Թան»ի — խառնող յօդուածներուն: Պարիզեան մեծ քեյքը ծանր դատարանի կ'արձակէր Իքքիմաթի դէմ: «Կ'ուզեմք հուսալ, որ Շէվիէր փառապիսի խզէ իր համերաշխութիւնը Ազանայի անպատեմ մնացած զարգացման հետ: այլապէս այն կոմիտէն, որու ներկայացուցիչն է ինքը կառավարութեան մէջ, կը ստանձնէ ծանր պատասխանատուութիւններ՝ ոչ այլեւ Ափրիկէի ու Եւրոպայի, այլ Ասիոյ մէջ»:

Իսկ Դաւանակցութեան պատճառները կը գրէր. —

«Պապիկեանի տեղեկագիրը կը ներկայացնէ բուրբ սամմանադրականներու հեծարիտ պատկեր իր վայրենի և այլանդակ մերկութեամբ: Հայ ժողովուրդը... Երբէ պիտի չմտնայ ու չներէ արարները այդ քսման Վամոտայի, որ Լեռնականութեան շարժումն սակ կը պահպանէ իր դաժան, արիւնուտ տոնգրակաճութիւնը: Հայ ժողովուրդը Երբէ պիտի չվստահի Հանի Աթիլ պէյերու կազմակերպութեան ու կառավարութեան, և Ազանայի արտառուի մերկացումները կը կսգմեն մի նոր, վնասակար ու անաւոր փաստ, որ կը հարկադրէ մեզ ապա ինչիլ Լեռնական կոնսերվից»...

նը և Հ. Յ. Դաշնակցութիւնը կատարեալ համաձայնութեան եկան հետեւեալ հիմնական կէտերու մասին.

1. Սահմանադրութեան կիրարկումը և հանրային զարգացումը երկրին մէջ անսասանօրէն ամրապնդելու համար պիտի աշխատին և պայքարին միացած ուժերով, չխնայելով ոչ մէկ զոհարերութիւն:

2. Յետաշրջական շարժումներու հաւանականութեան հանդէպ օրէնքի թոյլատրած բոլոր կարելիութիւններու սահմանին մէջ, պիտի գործեն միասիրտ հաստատակամութեամբ և որոշ ուղղութեամբ:

3. Օսմանեան նուիրական հայրենիքը անջատումէ և բաժանումէ զերժ պահելը երկու կազմակերպութեանց միացեալ գործունէութեան նպատակակէտը ըլլալով, անոնք պիտի աշխատին գործնականապէս փարատել հանրային կարծիքին մէջ բռնակալ սեփմէն ժառանգ մնացած այն սուտ զրոյցները, թէ հայերը անկախութեան կը ձգտին:

4. Երկու կուսակցութիւններն ալ կը յայտարարեն, թէ համամիտ են «նահանգային իրաւանց ընդարձակման» մասին, որ կ'երաշխաւորէ օսմանեան ընդհանուր հայրենիքի զարգացումն ու յառաջդիմութիւնը:

5. Իթթիհաս-թերագզը և Դաշնակցութիւնը, իբրև խրատական նախազգուշացում ընդունելով Մարտ 31ի դէպքը և Ադանայի ցաւալի աղէտը, որոշեցին աշխատիլ ձեռք ձեռքի տուած՝ վերոյիշեալ հիմնական կէտերու իրագործման համար:

Իբբիհաս-թերագզը կուսակցութեան
Ընդհանուր Կեդրոն

Հ. Յ. Դաշնակցութեան Կ. Պոլսոյ
Պատասխանատու Մարմին

Նոյն 1909 թուականին, Դաշնակցութիւնը պարտք սեպեց իր V Ընդհանուր Ժողովի Յայտարարագիրով վերստին ծանուցանել ի լուր հայութեան և բոլոր օսմանցիներուն՝ թշնամիներու և բարեկամներու՝ իր քաղաքական հաւատամքը, որով կ'ուղէր նաեւ փարատել հայ ժողովրդական կուսակցութեան շուրջը խտացուած թիւրիմացութիւններու, դադաասու քննարկ մշուշը: Ահա թէ ինչ կը կարդանք այդ ընդարձակ վաւերագրին մէջ.

«Ողջունելով հին ռեժիմի տապալումը օսմանեան պետութեան մէջ, ուր նախկին կարգերու աւերակներուն վրայ կը ձեւաւորուի անգառութեան շէնքը, Դաշնակցութեան Ընդհանուր ժողովը— քաջալերուած քսանամեայ յեղափոխական դրական աշխատանքով, զոր մտցուց վերածնութեան գործին մէջ, լցուած խորունկ յարգանքով... զոհերու յիշատակին հանդէպ, որոնք... իրենց հերոսական մահով, կուսակցական դրօշին տակ, նոր կեանքի խարխիւր կոեցին— պարտք կը համարի յայտարարել,

Որ Դաշնակցութիւնը, իբրեւ կոռուզ, յեղափոխական կուսակցութիւն, վար կը դնէ դաւադրական այն միջոցները, որոնցմով կը պայքարէր հին բռնակալ ռեժիմին դէմ և... ի հարկին հանդէս կուգայ ռազմական իր ամբողջ ուժով՝ կռիւ մղելու ուղիւսին դէմ, երբ ան սպառնայ սահմանադրական կարգերուն...»

Որ Դաշնակցութիւնը... պիտի շարունակէ նոյն թափով... համազործակցիլ թուրք երիտասարդ կուսակցութեան և մտաւորականութեան հետ ի պաշտպանութիւն Սահմանադրութեան և համախմբել այդ գործակցութեան շուրջ այն բոլոր ընդդիմադիր տարրերը, հայ և օտար, որոնք դիտակցութիւն և նպատակ ունին պաշտպանելու նոր կարգերը, ինչպէս նաեւ ժողովրդի կեղծքուած դասին շահերը...»

Որ Դաշնակցութիւնը, վճռականապէս ետ մղելով անջատողական ձգտումները, պիտի տքնի վերակազմել երկրի քաղաքական և տնտեսական կարգերը օսմանեան պետութեան ամբողջութեան մէջ, հիմնուած բոլոր շրջաններու տեղական լայն ինքնավարութեան վրայ և ամրապնդուած բոլոր տարրերու դաշնակցային կապերով...»

... Ժողովը կոչ կ'ընէ դաշնակցական բոլոր մարմիններուն ճշգորէն հետեւիլ կազմակերպութեան Բարձրագոյն Ատեանի գծած շաւիղին, խորապէս համոզուած, որ կարմիր ու մահաբոյր անցեալէն յետոյ, կարող պիտի ըլլանք պատրաստել վաղուան յաղթանակը,— ժողովրդապիտանութիւնը, հիմնուած ազնւոյն սանձի գաղափարին վրայ»:

Ու վերսկսաւ սրիդիֆեան դժնդակ աշխատանքը... «Ողջունելով հին ռեժիմի տապալումը... Ազանայի խորշակն ալ անցաւ։ Այդ նոր աղէտն ալ մարտեց հայ նահատակ ժողովուրդը, ճիշդ ընելով հաւատալու, որ այդ աղէտն ալ ծնունդ էր մեռ-

նող համիրականութեան, ծնունդ՝ անոր հոգեվարքի գալարումնեբուն, մոռցա՛ւ հայ ժողովուրդը և այն դատական եզերակատակը, որ կոչուած էր պատժելու Աղանայի ողբերգութեան հեղինակները *) և անյիշաչար ոգիով նորէն լծուեցաւ օսմանեան յառաջգիմութեան ու վերածնութեան սայլին՝ նոյն երկտասարդ թուրքերուն հետ ...

Օսմանեան տիրող ու մեծագոյն կուսակցութեան հետ դաշնակցելով, Հ. Յ. Դաշնակցութիւնը վերստին նետուեցաւ ասպարէզ և ձեռք զարկաւ խաղաղ, շինարար, ստեղծագործ աշխատանքի, ծաւալեց արտակարգ եռանդ ու բեղնաւոր գործունէութիւն Հայաստանի մէջ, կայսրութեան բոլոր հայաբնակ վայրերում, Վանէն մինչև Խարբերդ ու Սեբաստիա, համախմբեց իր շուրջը բոլոր գործօն տարրերը, հիմնեց մօտ ու հեռու կեդրոններուն մէջ իր ազատ մամուլը, իր զինուորական, ինքնապաշտպան կազմակերպութիւնները և սկսաւ մարտել, դատարարակել հայ երիտասարդութիւնը նոր կարգերու, նոր քաղաքական հաւատամքի ոգիով:

* * *

Հ. Յ. Դաշնակցութիւնը դարձաւ թուրքիոյ պետական կեանքի խոշոր ազդակներէն մին: Նա ունէր իր պատգամաւորները Օսմանեան Խորհրդարանում և իր ուժեղ ու ազդեցիկ ներկայացուցչութիւնը վերաբացուած հայ Ազգային ժողովին մէջ, որ Յարութիւն Շահրիկեան կեդրոնական դէմքերէն մէկն էր: 1909ին կուսակցութիւնը հիմնեց նաեւ իր մամուլը Կ. Պոլսոյ մէջ, Լոյս տեսաւ, Յունիս 10ին, պաշտօնաթերթ «Ազատամարտ»ը — Հ. Յ. Դաշնակցութեան Արեւմտեան Բիւրոյի օրգան — որ առաջին իսկ օրերէն շարժեց ընդհանուր հեռաքրքրութիւն: Կը հրատարակուէր նոր թերթը Ռուբէն Զարգարեանի խմբագրութեամբ և մօտիկ աշխատակցութեամբ մեր միւս աւագ ընկերներուն՝ Ակնունիի, Վոսմեանի, Շահրիկի, Զաւարեանի, Խաթա-

*) Երիտասարդ Թուրքիոյ արդարադատութիւնը բնաւ, ի հարկէ, անհանգիստ չբաւ դիմ ունեցող սնրագործները եւ -- անաչառութեան պատճառով հայ օտարը եւս յանցապարտի նստարանին բազմեցնելով — կախաղան հանեց մէկ քանի իւղն ու կրակ բուրեղաւ հե՞՛ քանի մը հայ երիտասարդներ էր:

կի, Լ. Շանթի, Մշոյ, Գեղամի, Ռ. Դարբինեանի, Ռ. Լեոնեանի, Մ. Կիւրճեանի, Եւ երիտասարդ ընկերներէն՝ Շաւարշ Միսաքեանի, Սիրուհիի, Բարսեղ Շահպաղի, Վարուժանի, Գեղամ Բարսեղեանի, Լ. Համբարձումեանի, Ղ. Մելոյեանի, Սիամանթոյի, Գասպար Իփէկեանի, Սրենցի եւ այլն: Կ'աշխատակցէին նաեւ չէզոք համակիրներ, որոնց մէջ՝ Գրիգոր Զօհրապ:

Մեծ էր հմայքը ձախակողմեան, յեղափոխական օրգանին՝ այն օրերուն, երբ ամէն ոք, անգամ անգոյն չէզոքները, չափաւորները, պատիւ կը սեպէին յեղափոխական յորջորջուելու: Ո՞վ կը համարձակէր այն օրերուն քար նետել Դաշնակցութեան վրայ, անէծք կարգալ յեղափոխութեան, Գարեբու և անէծքի տարափը կը տեղայ այն ժամանակ միայն, երբ մեր կամքէն անկախ պատճառներով — ինչպէս ամէն տեղ, բոլոր ազգերու մէջ — վրայ կը հասնի ռեակսիոնը, կուգան ձախորդ օրերը: Այն ատեն վա՛յ Յեղափոխութեան և «ի խա՛չ հան» Դաշնակցութիւնը: Այդպէս եղաւ Ադանայի աղէտէն յետոյ: Այդպէս ըրած է միշտ հայոց տգէտ և ուսեալ մտաւորական ամբոխը, — և մանաւանդ բոլոր անոնք, որ երբեք ճիգ չեն ըներ ազատութիւնը նուաճելու համար, կը փախչին նուազագոյն զոհաբերութենէ և խոչ ու խուժ կը զնեն գաղափարական ու մարտնչող տարրերուն առջեւ . . .

«Ազատամարտ»ը դարձաւ ժամադրավայր գաղափարական երիտասարդութեան, որուն շարքերը արագ-արագ կը խտանային: Եւ թերթն ստացաւ, բնականաբար, իրեն արժանի գիրքն ու կշիռը նաեւ պետական կեանքի մէջ, յաչս իշխող տարրերու: Կառավարութիւնը միշտ ուշադիր էր անոր ձայնին, հաշուի կ'առնէր անոր կարծիքները պետական կարեւորութիւն ունեցող այլ և այլ խնդիրներու շուրջ *):

«Ազատամարտ»ը կը գրաւէր մտաւորական բազմութիւնը իր անկախ ու անկողմնակալ խօսքով, քննադատական շիտակ կեցողութեամբ և իր ժողովրդավար ազատական ուղղութեամբ: Կարճ

* Իսլամականութիւնը շուրջ հիմնեց և իր սեփական եպարտեր Համալ-Պաթիի շէնքին մէջ, ուր և հաստատուեցաւ Ազատամարտի խմբագրութիւնը: Հոս նաեւ տեղի կ'ունենային Արեւմտեան Բիւրոյի նիստերը:

ժամանակի մէջ անոր շուրջը համախմբուեցաւ երիտասարդ գրողներու և հրապարակագիրներու փայլուն ընդ մը, թերթի հրապոյրներէն մէկն ալ այն էր, որ խմբագրութիւնը լայն տեղ կուտար հայ գաւառի ցաւերուն ու հոգերուն:

Երիտասարդութեան համար տեսակ մը սրբավայր էր Ազասամարտի շէնքը, — կ'ըսէ Սիրունի իր յուշերուն մէջ. — թերթը խթանեց հայ գրական շարժումը, նոր սերունդ մը պատրաստելու հոգը ստանձնեց համիդեան ռեժիմի այլանդակուած միջավայրում և հայ գիրը տարաւ դէպի գաւառի ամենէն խուլ անկիւնները...

Անցաւ շուտով գինովութեան շրջանը և ծայր տուաւ յետախաղաց հոսանքը: Հոգ եւս տեղի ունեցաւ նոյն երեւոյթը, որուն ականատես եղանք 1905—906ի ազատ օրերուն, հայուութեան միւս հատուածին մէջ, ինչպէս որ դաշնակցական նորածին մամուլի յաջողութիւնները զայրացուցին մինչ այն թիֆլիզեան հրապարակին տիրող թերթերու խմբագիրները, — նմանապէս Կ. Պոլսոյ մէջ Ազասամարտի հրատարակումն ու անսովոր տարածումը յառաջ բերաւ թշնամութիւն հայ մամուլի հինաւուրց օրդաններու տէրերուն մէջ — Բիւզանդիոնի, Արեւելի, Հայրենիքի և այլն: Այդ թշնամութիւնը բուն կերպարանք առաւ Ադանայէն յետոյ: Իթիհատը իր յետադէմ տարբերով մեղսակից էր կատարուած եղեռնին, իսկ Դաշնակցութիւնը բարեկամ էր իթիհատին, Պարիզեան Կոնգրէի օրերէն ի վեր... Հետեւաբար — և եղրակացութիւնը պատրաստ էր — հակառակորդ բանակը լայնօրէն օգտագործեց այդ զէնքը մեղի դէմ: Իսկ երբ դաշնակցականները ստորագրեցին ծանօթ համաձայնագիրը իթիհատի հետ, բարձրացաւ մի տնաւոր վայնասուն: Դաշնակցութիւնը որակեցին դաւաճան, ազգադաւ մակդիրներով...

Եւ հակադաշնակցական այդ կատաղի արշաւանքը զուր չանցաւ: Որքան ալ շահախնդիր ու անխիղճ էին հակառակօրդները իրենց ծանր ամբաստանութիւններով, — այնուամենայնիւ «բան մը կը մնար» անգամ ամենէն հրէշաւոր զրպարտութիւններէն, անոնք կ'ազդէին խակ ու պարզուկ մտքերուն վրայ և կը ստեղծէին համապատասխան արամադրութիւն: Տարածեցին մինչեւ անգամ — շինծու փաստաթուղթերով «հաստատեցին» հայանուն թերթերու մէջ — թէ իբր Սեւանիկում

կ'սքուած համաձայնութեամբ մերինները յանձառու եղեր են իթթիհատի առջեւ՝ յաջողեցնելու հայութեան ձուլումը թուրք իշխող տարրին մէջ... «Գործակցութիւն» բառը չարախօս հակառակորդներու բերնին մէջ դարձեր էր ձուլում... Ազատամարտի վճռական հերքումն անգամ անկարող եղաւ ջրել ի սպաս այդ անհեթեթ յերիւրանքը:

Ուրիշ պատրուակներ եւս յօրինեցին՝ միջկուսակցային ատելութիւնն ու թշնամանքը արծարծելու համար: Պոռացին, թէ Դաշնակցութիւնը կ'ուզէ քանդել եկեղեցին, անկրօնութիւն կը քարոզէ, ազատ սէր կը քարոզէ նոյնիսկ եկեղեցիներու բեմերէն: Եւ այդ վայրենի ժխտէն ծնունդ առաւ «բաց ու զոց» ի ազմկայոյզ վէճը որ երկար ժամանակ թուրքաւորաց մթնոլորտը, Պոլիս, Իզմիր և այլուր:

Եկեղեցիները բա՞ց են թէ գոց՝ միթիւնկներու, հրապարակային ատենախօսութիւններու համար... Ըղճիմ հարց մը, որ սակայն երկու կողմող բանակի էր վերածեր ազգի վարիչ ընդհանրութիւնը թրքահայ մեծ կեդրոններում: Ինչպէս կովկասի մէջ, ազատութեան կարճատեւ շրջանին, նմանապէս Թուրքիայում, Սանմանդրութեան օրերուն, քաղաքական կուսակցութիւնները, առ ի չգոյժ ընդարձակ, յարմարաւոր սրահներու, ժողովրդական միթիւնկներու համար կ'օգտագործէին եկեղեցիներու բեմը: Եւ ահա, երբ յարաբերութիւնները լարուեցան, մեր պատերազմիկ կղերը, իրեն աջակից ունենալով ծանրազուխ էֆէնտիներ և խուժանամիտ մտաւորականներ, արասասանց իր veto-ն և, յանուն տաճարներու սրբազնութեան, գոցեց անոնց դռները ժողովրդական հաւաքոյթներու, անկրօն, «անհաւատ» դաշնակցականներու առջեւ: Այդ պատճառով տեղի ունեցան նոյն իսկ արիւնոտ ընդհարումներ, մասնաւորապէս Իզմիրի մէջ:

Հաւ գիտէին այդ բազմապիսի հակառակորդները, որ Դաշնակցութիւնը ոչ ոք կը հալածէր, ոչ եկեղեցիները կը սրբապղծէր և ոչ ալ ազատ սէր կը քարոզէր, բառի գռեհիկ իմաստով: Դաշնակցական քարոզիչները, իրենց գրականութեան մէջ պարզելով հանդերձ գիտութեան ճեւակէք կրօնական բարդ կնճռի մասին, վաղուց յայտարարեր են իրենց ծրագրի, այլ և գրքերու, յոգուածներու մէջ, որ կրօնը անհասական խղճի

գործ է*)։ Եւ եթէ քանի մը տաքզուխներ մեր շարքերէն երբեմն զուտ բոլշեւիկեան ձեւերով կը մղէին անկրօնութեան ու ազատ սիրոյ քարոզչութիւնը, առոր համար կուսակցութիւնը պատասխանատու չէ։ Նախորդ էջերուն մէջ ըսինք արդէն, որ այդ և նման ծայրայեղութիւնները ազատագրական եռուն հոսանքին անխուսափելի փրփուրն ու քափն են։ Զ. Յ. Դաշնակցութիւնը զզուանք ունի բոլշեւիկներու վայրենի մեթոտներուն հանդէպ և բնաւ չի բաժներ անոնց միամիտ հաւատքը, թէ հնարաւոր է արմատախիլ ընել կրօնի զգացումը զանգուածներուն մէջ՝ մուրճի ու կացինի հարուածներով... Եկեղեցիները քանդելով և ժողովրդական սրբութիւնները պղծելով— ինչպէս որ կ'ընէին տգէտ ու բիրտ եբրեյսները Ֆրանսական Յեղափոխութեան ընթացքին, հարուածելով ու վարկաբեկելով նոյն ինքն Յեղափոխութեան վեհ գազափարը ...

Ատայոց առասպելներ էին մեր աշխարհայեացքի ու գործելակերպի դէմ ուղղուած բոլոր մեղադրանքներն ու քարկոծումները։ Անոնք միայն մէկ նպատակ ունէին— կտտրել Դաշնակցութեան բարձրացող հմայքը... Եւ մասամբ յաջողեցան։ Նման են կուսակցական պայքարի ձեւերը ցեղին երկու հատուածներուն մէջ*)։ Նոյն արտասուելի տեսարանը կը պարզէր Անդրկովկասը Լիհրան-Առաքելեան տղմոտ հոսանքի օրերուն։ Հայ քաղաքական մտքի հրապարակին վրայ— Զ. Յ. Դաշնակցութեան գործերու հանդէպ— իշխեր է միշտ սանձարձակ և չարագործ կիրքը, ի տեղի սրտցաւ և շինարար քննադատութեան, որուն ա՛յնքան պէտք ունէր հայ ժողովուրդը և նոյն ինքն Դաշնակցութիւնը ...

Ընկերաբանական երկարաշունչ վերլուծումներու համար տեղ չկայ, տարաբախտաբար, այս հատորին մէջ.— չենք կարող սակայն չյիշատակել, որ այդ կրքոտ ու քինոտ պայքարը, զոր կը մղէին մեր հակառակորդները Դաշնակցութեան դէմ,

*) Տես այս մասին մեր «Վերածնունդ Հայրենիք»— «Դրօսակի մասեմաւրէն»— եւ Պոլսոյ մէջ իսկ 1910ին հրատարակած «Պիտուքիւն եւ Կրօն» գրուածքը։

**) Փութանք, սակայն, յիշատակել— ի պատիւ կովկասեան կղերի— որ բաց ու զոյի անպատիւ կռիւն ու վայնասուեր երբեք այնեւոյ չարժարժուեցաւ, անգամ ամենասուր հակադաճակցական պայլարի միջոցին, եւ նոյն իսկ յանախ Բանասերը կը խառնուէին ժողովուրդի հետ եկեղեցական միջինկեներու մէջ։

իր խորքին մէջ դասակարգային էր, Հին, մեռնող դասակարգերու գրոհն էր այն — կղերի, էփէնտիներու, գրամի ու զէրքի իշխաններու — ընդդէմ բուն ժողովրդական տարրերու, աշխատաւոր ու տառապող ընդհանրութեան, որ թափով վեր կը բարձրանար և կը ձգտէր իր ձեռքն առնել ազգի ճակատագիրը, նոր չէր այդ գրոհը, նորութիւն չէր ժողովրդական, ռամկավար հոսանքը հայ կեանքի մէջ: Նա ծայր տուած էր դեռ 60ական թուականներուն Խրիմեանի «Արծուի Վասպուրականի»ով և վարագեան մեծ ու փոքր արծիւներու քարոզչութեամբ՝ գաւառի ու մայրաքաղաքի մէջ:

Նոր չէր, ո՛չ, Վոսփօրի ափերուն վրայ մղուած գոտեմարտը, որ կը հնազանդէր պատմափիլիսոփայական նոյն ընդհանուր օրէնքներուն, կը վերարծարծէր, փոքրիկ ծաւալով, հայութեան համեստ շրջանակներուն մէջ ողջ յառաջագէմ մարդկութեան զարաւոր պայքարը, հինի ու նորի մաքառումը, Բայց այժմ այդ գոտեմարտը կը մղուէր իշխող տարրերու կողմէն աւելի բուռն ու սանձարձակ, նման այն պայքարին, որ բոքրքեր էր 1905—906 թուականներուն Անդրկովկասեան հայութեան մէջ, Հայկական դեմոկրատիզմը (ժողովրդական հոսանքը), ի դէմս Հ. Յ. Դաշնակցութեան, ասպարէզ կուգար աւելի յստակ, արմատական ծրագրով ու դիմագիծով և իր հեռաւոր, ընկերվարական իսէալի ներշնչմամբ կը ձգտէր աւելի եւս խորացնել, կատարելագործել Խրիմեաններու, Ռուսիեաններու ռամկավարական նուաճումները:

Բռնապետական վարչաձեւը մինչ այն կը խեղդէր նաեւ այդ ներքին հակամարտութիւնը մեր յառաջագէմ համայնքի ծոցին մէջ, Համիդեան երեսնամեայ տիրապետութեան ընթացքին, թրքահայ աշխարհը վերաժուած էր նաեւ մտաւոր գերեզման-նոցի, Ռեժիմը կը կաշկանդէր անգամ խաղաղ մշակութային զարգացումը՝ տալով անոր ղեկավարութիւնը մեր կղերա-վահ-պանողական ուժերուն ձեռքը, Բայց երբ քիչ-չատ ապահովուեցան սահմանադրական ազատ կարգերը Արդիւլ Համիդի աքսորումով, երբ հայը սկսաւ ապրիլ օսմանեան կայսրութեան մէջ քաղաքացիի ազատ կեանքով, այն ժամանակ անա ուժով արթնցան ու շեշտուեցան դասակարգային և կուսակցական տարրեր, հակամարտ հոգեբանութիւնները, Արտաքին թշնամին վերանալով, թուլացան նաեւ հայութեան ներքին իշխող գա-

քերու դիրքերը հանդէպ իրենց հակոտնեայ ժողովրդական տարրերուն, և ծնունդ առաւ ցեղից պայքարը, Հայ ընկերային կառուցուածքը օբրտաւորուեցաւ, դասակարգերը զատուեցան, գրիւրեղացան և հայկական հրապարակը դարձաւ տարբեր շահերու և ձգտումներու մրցարան, Բնականոն երեւոյթ մըն էր, յատուկ նաեւ մեզմէ աւելի բարձր ազգերուն: Առանց այդ դասային շերտաւորումներուն և կուսակցական պայքարներուն՝ անհնարին են մարդկութեան յառաջդիմութիւնն ու քաղաքակրթութիւնը:

Անշուշտ, հիւանդագին արտայայտութիւններ ալ կը մատնէ հայ կեանքի հոլովոյթը: Պահպանողական տարրերու մոլեռանդութիւնը և ազատական հոսանքներու «քափն ու փըրփուրը» գուցէ աւելի թանձր են և աւելի մտահոգիչ, քան որեւէ այլ ազգի մէջ: Բայց անգամ հայոց երկնակամարի տակ, անմիաբանութեան և հնաւանդ անմիաբանութեան միջավայրում՝ կռիւր միակ տիրական օրէնքը չէ: Կայ և անոր հակոտնեան — համեմատելութիւնը: Եւ գուցէ այդ համեմատելութեան գերագոյն արտայայտութիւնն է քառասնամեայ այն զարմանալի կերտուածքը, որ կը կոչուի «Դաշնակցութիւն»...

Օսմանեան յեղափոխութեան երեք տարուան ժամանակաշրջանը — 1909 — 1910 — 1911 — անցաւ մեզ մօտ ներքին սուր պայքարի նշանակին տակ: Բայց ատիէ տարի մը յետոյ, երբ հասան ռեֆորմներու և ռուս-գերման բանակցութեանց օրերը, երբ հարկ եղաւ մէկ ճակատ կազմել և ազգովին մէկ կամք ցուցնել պետութիւններուն. — մէկէն ի մէկ չքացան հատուածային բախումները, կիրքը լռեց ու տեղի տուաւ օրինակելի համեմատելութեան:



Թողունք օսմանեան մայրաքաղաքի անցուղարձը և մըտնենք Թուրքաց Հայաստան, ուսկից հեռացեր էինք Սասնոյ մեծ դէպքերէն ի վեր: Հարեւանցի ակնարկ մը նետենք 1905 — 1908 թուականներու անցուղարձին վրայ: Աւելորդ չէ ըսել, որ առօրեայ կացութիւնը կը մնար նոյնը — ընդհանուր անապահովութիւն և անյոյս թշուառութիւն, քրդական ասպատակութիւններ, կառավարական յամառ, անդուլ հալածանք, որ գո-

կայն չէր յանգեր զանգուածային կոտորածի, որմէ կը զգուշանար, կը խուսափէր Ելլիզըզը: Մանր տագնապ մը, իրաւ է, վրայ հասաւ Վասպուրականի մէջ. 1908ի դարնան օրերուն, Յեղափոխութեան նախօրեակին, երբ մեր զինապահեստները մատնութեամբ բացուելէ յետոյ, թուրք իշխանութիւնները նոր պահեստներ փնտռելու և ժողովուրդը զինաթափ ընելու պատրուակով՝ սկսան խուզարկումներ ու սանձարձակ խժղութիւններ նիւթել ամբողջ նահանգին մէջ:

Իրողութիւնը մօտաւոր ճշդութեամբ այսպէս կը հաղորդուէր եւրոպական հեռագրական գործակալութիւններու կողմէ. —

«Մարտ 23ին, Վանի հայ յեղափոխականները, իրենցմէ մատնիչ մը հալածելու առեւն *), կրակ ըրին այն տան վրայ, ուր մատնիչը ապաստանած էր: Բաշիրողուկները, միացած ժանդարմներուն, օգտուեցան առիթէն ու յարձակեցան հայերուն վրայ: Սպաննուած են 33 հոգի:...

Տեղի ունեցան բազմաթիւ սպանութիւններ ու կանանց բռնաբարումներ, մասնաւորապէս իյաչէն գիւղին մէջ, ուր նըըրենի տանջանքներով կը ջանային գաղտնիքներ կորզել գիւղացիներէն, զէնքի պահեստներու և յեղափոխական պատրաստութիւններու մասին: Խուզարկութիւններու ժամանակ տեղի ունեցան նաեւ բուռն ընդհարումներ մեր խումբերուն և տաճիկ զինուորներու միջեւ, որոնցմէ շատեր սպաննուեցան:

*) Խօսքը թիւահոյակ **Գաւոյի** մասին է, որ իր հրէշուոր արարով եզակի սեղ պիտի բռնէ հայ մասնիչներու և դաւանանքներու սև քարգրտիւան մէջ: Հայ ցեղի այդ նողկալի վիժմունքը քանի մը քարի գործեր էր մեր քարերուն մէջ: Անձնական հսկառակութեան մը պատճառով, օրին մէկը կ'երթայ ոստիկանատուն և Յուդայի վարձատրութիւնն ստանալով, կը քանի թուրք ոստիկանները, մէկ առ մէկ կը ցուցնէ ու գրաւել կուտայ Այգեստանի եւ ուրիշ քաղերու, նաեւ Վանէն դուրս, Ս. Գրիգոր վանքը գեցուող մեր քար մը պահեստները, ուր քարներէ ի վեր դժուարին ճիզերով ամբարուած էր Գաւոյի կցութեան զէնքն ու ռազմամթերքը, հրազէն, ուժանակ և այլն: Մեր զինուորները խուզարկութիւններու պահուն քանիցս կրակեցին՝ մաքնիչը սպանելու և մնացած պահեստները ազատելու համար, բայց ապարդիւն: Ընդհանուր կորուստն եղաւ մօտ 300 հրացան և 300 հազար փափուտ: Գաւոյի քաղաքը այնուհետեւ մահուան սպառնալիքի բակ, կ'ապրէր միշտ քաղաքի մէջ, ուրիշ անվտանգ հսկողութեան տակ: Բայց հազիւ ապրեցաւ մէկուկէս ամիս — մեր անաբեկիչը, 15 քարեկան չկնաղ պատանի մը, զնդակի հարուածով վերջ տուաւ այդ հրէշածին **Գաւոյի** կլանիք եւ՝ ճեռապնդուած իսլամ խուճապէն՝ կրցաւ, այնուամենայնիւ, փախչիլ ու ազատիլ:

Զօրքեր կարինէն ու Խորքերդէն. ժողովուրդը ահաբեկուած էր, երկիւզ կար մեծ կոտորածի, թուրք-պարսկական սահմանադիւտէն հեռագիրներու տարափ կը տեղար ժընեւ, «Դրօշակ» ի խմբագրատունը, Շարք մը հեռագիրներով, ուղղուած մեծ պետութեանց արտաքին գործոց նախարարներուն, «Դրօշակ» իր կողմէ ահազանգ հնչեցուց, ապա ընկերներէն մէկը փութաց Պարիզ և Քիլեանի ու Վիկտոր Բերարի ընկերակցութեամբ ներկայացաւ արտ. գործոց նախարար Պիշոնին, որուն զեկոյց տալէ յետոյ Պրէսանտէի յանձնարարականներով մեկնեցաւ Լոնդոն, ուր անոր միացաւ բօխչի Զաւրեան, Տեսնուեցան Խորհրդարանի քանի մը ղէմքերու և թերթերու խմբագիրներուն հետ. Քանի մը օր բուռն ագիտացիա՝ Վանայ, Խաչէնի ղէպքերուն շուրջ, յօդուածներով ու հարցապնդումներով, Խորհրդարանին մէջ իրարու ետեւէ հարցապնդեցին Լինչ, Թրէվիլէըն և ընկերակցական պարագլուխներէն՝ Օ'Դրաքի Արտաքին գործոց նախարարը. սըր Էտուըրտ Գրէյ, յայտարարեց, թէ անմիջապէս կուտայ անհրաժեշտ հրահանգները Պոլսոյ ղեսպանին. Սգիտացիա՝ նաեւ Պարիզի մէջ, ուր գեռ կը հրատարակուէր Պրօ Արմենիան:

Նոյն այդ օրերուն եւրոպական թերթերն ալ արդէն հրատարակեցին բազմաթիւ հեռագիրներ իրենց սեփական ազբիրներէն: Ահա մէկը (այդ բոլորը արձանագրուած է ժամանակի «Դրօշակ» ին մէջ)։—

«Թուրք իշխանութիւնները աւարտեցին հայերու տուներուն խուզարկումը: Գրաւուած են 260 հրացան, 207 քիլոյ ուժանակ, 300,000 ի չափ փամփուշտ և ձերբակալուած են 100 մարդ, որպէս յեղափոխական: Անգլիական, Ֆրանսական, ռուսական ղեսպանները դիմում ընելով Բ. Գրան և յայտնելով, որ այլեւս Վանայ թուրք ժողովուրդը սպանով է, պահանջեցին որ Գուսը միջոցներ ձեռք առնէ ձերբակալելու կոտորածի հեղինակները և առջեւն առնէ քրդերու որեւէ յարձակումի ընդդէմ հայերու, քանի որ ասոնք արդէն զինութափ եղած են:»

Որ եւրոպոյի միջամտութիւնը այժմ իրօք կը սանձանորէր Երզրզի տէրերը և որ ղեսպանները եռանդով աշխատեցան ու առաջն առին ուեւրի մեծ աղէտներու, — այդ կը հաստատուի և Վանայ մեր ընկերներու նամակով, ուղղուած «Դրօշակ» ին (1908 թ. Մայիս), Այդտեղ կը կարգանք:

«Այլաննուածներուն թիւը կը հասնի 65--80ի: Հիւպատոսները, կտորածի լուրը լսելնուն, դուրս կուգան շուկան տանող ճանապարհին վրայ և վերագարձողները կը պաշտպանեն խուժանի յարձակումէն: Ֆրանսական հիւպատոսը գիշերը ժամը 2ին կ'երթայ քաղաք և մօտ 300 հոգի կը բերէ Այգեստան: Յաջորդ օրը ռուսական և ֆրանսական հիւպատոսները միասին կ'երթան քաղաք և մնացածները, մօտ 1,000 հոգի, շրջապատուած 200 զօրքով, կ'առաջնորդեն Այգեստան: Իսկ անգլիական հիւպատոսը գացեր էր Կլոթ Դար՝ այն տեղի հայերը պաշտպանելու»...:

Այսպիսի պայմաններու մէջ, դեսպաններու ուշադիր հըսկողութեան ներքեւ, Երզրզը, հարկաւ, պիտի դժուարանար կրկնել 1896ի դէպքերը Վանայ շրջանում:

Դարձեալ ֆրանսական կառավարութեան կորովի միջամտութեան շնորհիւ էր, որ Վասպուրականի մեր ուժերու զեկավարը, Վարդգէս, մահուան դատապարտուած, ազատեցաւ կախազանէն:

Ուրիշ ծանր հարուած մըն էր կրեր Վասպուրականի մեր կազմակերպութիւնը Վարդգէսի ձերբակալումով (1903 թ. Դեկտեմբերի վերջերը):

Ողբերգութիւն մըն ալ այս անուանի ընկերոջ կեանքը: Դաշնակցութեան ամենահին փառանգէն էր, Կ. Պոլսոյ 1893—94ի գործիչներէն: Առաջնակարգ դեր խաղացեր էր Կարնոյ ապստամբութեան մէջ, 1890ին: Երբ խմորումը կը սկսի, 22 տարեկան Վարդգէսը (Սէրէնկիւլեան) Առաջնորդարանի պատըշգամէն ողբերգի ճառով մը կը մղէ այնտեղ համախմբուած ժողովուրդը զէպի դիմադրութիւն՝ ընդդէմ կառավարութեան: Եւ ստիկանութենէն հետապնդուած՝ կը դառնայ, Երկար թափառումներէ վերջ, կուգայ Պոլիս և կը մանէ Դաշնակցութեան շարքերուն մէջ: Գնունիի, Արտաշէս Անդրէասեանի հետ միեւնոյն խումբին մէջ էր: Գործեց երկար տարիներ, որպէս ամենէն անձնուէր, հաւատարիմ ու խտեալներէն մէկը: 1901ին կը փոխադրուի Վան, ուր կը վարէ գործերը, որպէս յաջորդ Պետոյի ու Վազգէնի:

Մենք արդէն տեսանք, որ իր Վան հաստատուելէն ի վեր կենդանի յարաբերութեան մէջ էր Սասնոյ Պատասխանատու Մարմինին հետ, Հլայր, Երկաթ և ուրիշ ընկերներ կուգային

Մուշէն, Սասունէն՝ խորհրդակցելու անոր հետ իրենց ծրագիրներուն շուրջ, Վանայ ու Վասպուրականի մէջ Վարդգէս մեծ զարկ տուաւ կազմակերպութեան գործին, որ կը կաղար Վազգէնի նահատակութենէն ի վեր: Նոր, երիտասարդ ուժեր քաշեց գործին մէջ, մեծապէս նպաստեց ներքին համերաշխութեան, շատ սիրուեցաւ և կարճ միջոցում մեծ ժողովրդականութիւն վաստկեցաւ: Օր մը, արշալոյսին, ընկերներուն հետ կը պաշարուի բարեկամի մը տունը: Ժանդարմաներու պետը դուրսէն կը պահանջէ անձնատուր լինել: Զօրքը քիչ հեռու քաշուելով, մերինները կը փորձեն փախչիլ տան ետեւի տանիքներու ճամբով: Դրացիի տունը կը փոխադրեն Վարդգէսը, որ հրացանաձգութեան ատեն զարնուեր էր սրունքէն (ոտքը փշրուած՝ այնուհետեւ մնաց կէս-անդամալոյծ վիճակի մէջ): Իր չար բախտէն՝ այդ դրացիի տանը խենթ տղայ մը կար, որ, Վարդգէսը տեսնելով, սարսափահար դուրս կը թռչի դէպի տանիքը ու կը պոռայ. «կաչա՛ւ, կաչա՛ւ, կաչա՛ւ կայ մեր տուն»... Վարդգէս կը փութայ վառել քովը գտնուող վաւերաթուղթերը: Ժանդարմները, խենթի հաւարին վրայ, ներս կը խուժեն, կը ձերբակալեն ֆեղայիներու առաջնորդը: Խոշոր քիւրդ մը կը շալկէ զայն և, արիւնը սրունքէն հոսելով, ժանդարմաներու մտրակներուն ու խուժանի անարգանքներուն տարափին տակ, կը տանին քաղաքին բանար:

Շուտով մահուան կը դատապարտուի: Ընկերները *) քանիցս կը փորձեն փախցնել զինքը — անյաջող: Բանտէն կը շարունակէ կապ պահպանել ընկերներուն հետ, կուտայ անոնց մշտապէս իր խորհուրդներն ու հրահանգները: Յուզիչ են այն մի շարք նամակները, որ գրեր է մահապարտը իր զնգանի մէջ, հոգեկան ծանր խռովքի օրերուն, երբ արգէն յայտնուեր էր իրեն թրքական ատեսանի վճիռը:

Ահա քանի մը փոքրիկ քաղուածքներ.

Յուլուար 1. 1904

Նոր արուան ողջոյն ընկերներուն (ոտանաւորով)

Անցաւ հին արիւն վիճ սառապանով,

*) Վարդգէսի ձերբակալումէն յետոյ, գործեր ասեմ մը կը ղեկավարէր Վարդան Շահպազ, ապա Էկան ճեզգեւէ: Իճլան, Կոմս, Արամ, Սաղիս: Կային ևս հին, փորձուած վանեցի գործիչներ:

Նախօրէն թելերով նոր օտարի, բարով . . .
Որքան էլ լինիս վիճով լի օտարի,
Բայց ընկերներիս ես կը ցանկայի
Լինեի՞ն սրտով անկեղծ, անվեհեր,
Խիզախ պատգամներ վե՞ն գաղափարի . . .

Ուրիշ նամակի մը մէջ կը գրէր.

«Երէկ տուին մահուան վճիռ: Ա՛յ ասկէ վերջ առաւօտ-երեկոյ կախաղանը մեր աչքին առջեւն է: Այդ գաղափարին ալ կը վարժուինք» . . .

Ու քիչ յետոյ, նորէն.

«... Ձեմ վնասիր. մահը կ'արհամարհեմ. դեռ իմ ներսը լի է եռուն սգեւորութեամբ և յոյզերով: Հոգ մի՛ ընէք. եթէ մեռնիմ, դաշնակցականի մը վայել քաջութիւնը պիտի չպակասի ինձմէ. միայն իմ խնդիրքն է, ազնիւ ընկերներ, դուք եղէք քաջասիրտ, առաքինի, անձնագոհ, — այդ մի իթարութիւնը ինձ բաւական է» . . .

Դաշնակցութեան վասպուրականի լիազօրը մահուան դատապարտուած էր անդառնալիօրէն. հրաշքի պէս բան մը միայն կարող էր փոխել համիդեան ատեանի վճիռը: Թանկագին որս մըն էր, որ ձեռք ձգեր էին երկար տարիներու որոնումներէ յետոյ: Դէպքը «Պրօ Արմենիա»ի խմբագրութեան հաղորդուելով, Անատոլ Ֆրանսս նամակով մը խնդրեց Ֆրանսայի վարչապետին միջամտութիւնը՝ վարդապետ փրկելու համար: Վեհոցի ծերունին, Էմիլ Կումբ, անմիջապէս հրահանգեց Պոլսոյ դեսպանին՝ ճիգ ընել փոխել տալու մահավճիռը: Ելլողը համակերպեցաւ և մահուան պատիժը փոխարինուեցաւ 101 տարուան բանտարկութեամբ:

Նոյն հոգեկան ծանր խռովքը մեր վատաբախտ ընկերը պիտի ապրէր ատկէ 11 տարի յետոյ (1915ի Ապրիլին), Մեծ Եղեռնի օրերուն, երբ վերստին կը նետուէր մահապարտ աթոռին վրայ և Թալէաթի հրամանով կը տարուէր, Զօհրապին հետ, դէպի հեռու քարտուղայր-սպանդանոց, ուր այլեւս, աւա՛ղ, չէր լսուեր Անատոլ Ֆրանսներու և Կոմբերու օգնութեան աղաղակը . . .

Թուրք կառավարութիւնը չուզեց, սակայն, պահել վարդապետը վանայ մէջ. անգամ բանտում, նա վտանգաւոր էր. . . Եւ

առաւել՝ որ երկու տարուն բանտարկութեան միջոցին կազմակերպութիւնը քանի մը անգամ փորձ ըրեր էր փախցնելու կալանաւորը (անգամ ականներ փորուեր էին բանտի ուղղութեամբ, մերոնց ձեռքով, եւ այդ փախչելու փորձերն էին, որ ծանրացուցին դատավճիռը)։

Վարդգէս քշուեցաւ Տիգրանակերտ, ուր հայութիւնը հոծ չէր ու գրեթէ չկար կազմակերպութիւն. Այնտեղ եւս մեր ընկերները դադար չունեցան, Բանտէն միջոց գտաւ յարաբերելու գրտի հետ, քարոզելու և կազմակերպութիւն ստեղծելու։ Այդտեղ եւս փորձ ըրին փախցնելու Վարդգէսը, Այդ գաղտնիքն ալ բռնուեցաւ և բանտարկեալը փոխադրուեցաւ աւելի ամայի վայր մը, Արղնի Մատէն, երբ Հուրիէթը հասաւ և ամենուրեք բանտարկեալները ազատեցան, Վարդգէսը դեռ չէին արձակեր, Ատեն մը պահեցին բանտը, մինչեւ որ Պոլսոյ մէջ կատարուեցան դիմումներ աղքեցիկ շրջաններում և մեր ընկերը, վերջապէս, լոյս աշխարհ եկաւ շուրջ հինգ տարուան բանտարկութենէ յետոյ, Գնաց էրդրում, ապա Պոլիս, ուր և բազմեցաւ օսմանեան պարլամենտի մէջ, որպէս էրդրումի երեսփոխան։

* * *

Եւ անա ուրիշ դառնագին, անփոխարինելի կորուստ մը, Հուրիէթի նախորդ տարին 1907 թ. Մայիսի 27ին նահատակուեցաւ «Տարօնոյ Մրրկաթեւ Ասպետը» — Գեորգ Չաուօ։

Այն եւս հնազոյն փաղանգէն էր, Տասնեութ տարի անդու ու անվհատ գործեր էր փշոտ ճամբուն վրայ, տասնեակ յաղթական կռիւներու մէջ պաշտպաններ էր — քիւրդ ու թուրք հրոսակներու դէմ — հայ լքուած, աշխատաւոր ժողովուրդը, զոր կը սիրէր, որպէս ջերմ, քնքուշ, գուրգուրոտ զաւակ մը։ Իսկ երբ պայթեցաւ 1914ի Ապրիլեան պատերազմը և թրքական թնդանօթները սկսան կարկուտի պէս ձեծել Սասնոյ ապստամբները, Գէորգ Ապրիլ 11էն մինչև 30 դադար չունեցաւ. աներկիւղ կը սլանար թշնամուն դէմ, կը վարէր վարպետօրէն իրեն յանձնուած խումբերու կռիւները, կը վարէր աներեւոյթ ճարպիկութեամբ, Հասաւ ամենէն տաք ու վտանգաւոր կռիւներուն և 19 օրուան հերոսական դիմադրու-

թեհնէն վերջ, Անդրանիկի հետ ժողովուրդի գլուխն անցած, իջաւ դաշտ:

Ապա նոր կռիւներ նահանջի տեսնւ.— Գոմերի, Կուրաուուի, Շամիրամայ կռիւները, Վերջինը տեւեց 14 ժամ, Գէորգ այնպիսի անարկու կրակ տեղաց թշնամու ամենէն ուժեղ թեւին վրայ, որ վերջինը չկրցաւ տոկալ, նահանջեց, Գիշերը հասաւ և տղաները, 17 հոգի, Անդրանիկի առաջնորդութեամբ նաւ նստելով, անցան Աղթամար: Արտայոյզ դրուագ մըն ալ այդտեղ, Վերջին զինուորական խորհուրդը— նախ քան անցնիլը Պարսկաստան: Տղաք կը մեկնէին Կովկաս, բայց իրենց ուշն ու միտքը ետ կը թռչէր դէպի Սասնոյ սրբացած զազաթները, Կ'որոշուի ընկերներէն մէկը ետ դարձնել, դէպի լքուած ժողովուրդի ծոցը, թոյլ չտալու համար, որ մատնուի յուսահատութեան ու մահաբեր ջլատումի: Այդ պարտականութիւնն եւս սիրայօժար առաւ իր վրայ Գէորգը:

Վերադարձաւ Սասուն, Եւ բուռ մը ընկերներու հետ ապրեցաւ երեք տարի եւս հարազատ լեռներուն մէջ, իր կեանքի գուցէ ամենէն զոհառատ, դժնդակ տարիները: Հալածական, շարունակ հարկադրուած փոխադրուելու զարանէ-զարան՝ նա շատ շատերը պատահասեց ժողովուրդի արիւնարբու ոսոխներէն, որոնցմէ էր մշեցի Բերիմ աղան, Ալիջանի ու շրջակայ հայ գիւղերու վամպիրը, շատ շատերը կոտորեց նաեւ ներքին ցեցերէն՝ լրտես, մատնիչ, վաշխառու և ամէն տեսակ կեղեքիչներ: Չարագործները պատժելով՝ Գէորգ միւս կողմէն իր ձեռքով նպաստներ կը բաշխէր կարօտեալներուն և ըստ ամենայնի կը ձգտէր սփոփել տանջահար, անօգնական ժողովուրդը:

Հասաւ, աւա՛ղ, այդ աննման Չաւուշին ալ ժամը... Մայիս 27, Այդ օրը ստիպողական գործով, Ռուբէնի և 17 ընկերներուն հետ, իջաւ Սուլուխ, Հանդիպեցան երկու թուրքի, ճանչցուած, մինչ այն, իրրեւ վատանելի բարեկամներ... Քանի մը ժամ անց թուրքերու մեկնումէն, գիւղը պաշարուեցաւ ոստիկաններով ու զօրքով: Սուլուխը՝ հարթ, զուրկ ռազմական ամէն գիրքէ ու յարմարութենէ, Գէորգ նորէն ի գործ դրաւ իր բազմիցս հռչակուած յանդգնութիւնը, որով քառասունէ աւելի ճակատամարտներ մղած էր, շատ անգամ յաղթանակով... Խլազախօրէն սլացաւ դէպի թշնամին՝ անարեկելու և անոր շաքերը ցրուելու համար... Բայց անկարելին կը փորձէր: Զքնաղ ռազմիկը, գնդակահար, գետին փռուեցաւ: Սպաղանաց Գալէն,

այդ միւս հինաւուրց կտրիճը, որ անբաժան ընկերն էր եղած Գէորգին, անոր մահը տեսնելով, յառաջ նետուեցաւ վրէժ-խնդրութեան մասնչիւնով և ինքն ալ ստացաւ մահաօրիթ գընդակը, միանալով իր Չաւուշին նաեւ մահուան գրկին մէջ...

* * *

Չենք կարող, տարաբախտարար, ծանրանալ այն բոլոր ցաւագին կորուստներուն վրայ, որ ունեցանք նոյն թուականներուն և որոնցմէ թերեւս ամենէն կակծալին մեր երեք թանկագին ընկերներու— Ջնդոյի, Սէյդոյի և Չաւէնի— խողխողումն էր քիւրդ ցեղապետ Ղասըմ բէյի ձեռքով, որու յարկին տակ գիշեր ատեն «սիրալիք» հիւրընկալութիւն գտեր էին, յանուն հայ-քրդական համերաշխութեան (1907 թ.)...

Եկաւ Սահմանադրութիւնը, Աւետարեք լուրը բիւրաւոր արձագանգներով տարածուեցաւ հեռաւոր գաւառներում, Յընձութիւն էր հայ երկրի մէջ, Լոյսի հզօր ճառագայթ մը՝ դարերու անանց իսլաւրէն ետք... Սկսաւ ազատ երթելեկը, կարաւանները շարժեցան, կեանքը ծլեցաւ աւերակներուն վրայ: Ֆեղայի ներք իջան լեռներէն, գրկախանունեցան ժողովուրդի հետ: Վերադարձան նաեւ տարագիր խմբապետները— Մուրատ, Առաքել, Ա.օ, Հաճի, Վարդան Շահպազ և ուրիշներ: Քաջերու փաղանգը վար դրաւ զէնքը, մտաւ մեր անխոնջ մտաւորականութեան շարքերը և գնաց խաղաղ, բեղուն ճիգերով ազատութեան շէնքը կերտելու: Թերթ ու դպրոց, քարոզչական ակումբներ, թատրոն, գրագարան-ընթերցարաններ, գիւղացիական, արհեստակցական միութիւններ և այլն: Տպարան ու մամուլ վան («Աշխատանք») ու էրզրում («Յառաջ») *, խանդավառութիւն, շինարարական եռ ու զեռ ամենուրեք, նաեւ Փոքր-Հայքի մէջ, Հիացումի ու խորունկ երախտագիտութեան արժանի գործ մը, ռազմիկ Մուրատի և բուռ մը ընկերներու դպրոցական, մշակութային լայնածաւալ աշխատանքը Սեբաստիոյ շրջանին մէջ:

Եւ չմոռցան կարեւորագոյնը: Սուրը դուեր էր պատեանին

*) Լոյս տեսնուեցաւ մեծ մասը նախ խմբակայ՝ «Առաջադիմութեան» Իգմիրում, «Երախտ»՝ Տրապիզոնում, «Արաբ»՝ Խարբերդի և «Փերակ»՝ Կիւստանի մէջ:

մէջ. բայց պէտք չէր որ ժանգոտէր. Սահմանադրութիւնը հըռ-
չակուեր էր, բայց պէտք չէր որ յանձնուէինք երջանիկ լաւա-
տեսութեան. Զէնքը վար գրին մեր ընկերները, չըսին սակայն.
«Մնաք բարով, սուր ու հրացան»: Ծատ բուռն էր հայ ժողո-
վուրդի իրանդավառութիւնը, բայց թրքական հորիզոնը գեռ
պատած էր չարագուշակ ամպերով... Սկեպտիկ էին, թերա-
հաւատ օսմանեան Հուրիեթի հանդէպ մեր մի շարք ռազմիկ ու
մտաւորական ընկերները: Եւ կազմակերպութիւնը կը հրա-
հանգէր մեր բոլոր մարմիններուն՝ զէնքի պահեստներ ստեղ-
ծել, զինել ու մարզել ժողովուրդը, երիտասարդութիւնը, կը
հրահանգէին, որ ժողովուրդը ինքը հոգայ ինքնապաշտպանու-
թեան իր հոգերը, որ իւրաքանչիւրը զէնք ձեռք բերէ և մար-
զուի զէնքի գործածութեան մէջ: Այդ հրահանգները աւելի
ուժով սկսան տեղալ Ազանայի աղէտէն յետոյ, երբ յայտնուե-
ցաւ, որ տասնեակ հազարներով հայ մարդիկ խողխողուեր են,
հին օրերուն պէս, գրեթէ առանց ինքնապաշտպանութեան գի-
մելու:

Եւ անգամ Ազանայի սարսափները խրատ չեղան մեր ժո-
ղովուրդին համար: Հայութեան մեծ զանգուածը, Մեծ ու Փոքր
Հայքի մէջ, անշարժ կը մնար ընդհանրապէս, խուլ ականջ
կ'ընէր մեր ընկերներու յուսահատ կոչերուն: Որքա՞ն կը տա-
ռապէր դժբախտ Մուրատը, Որպիսի՞ օրահասական ճիգեր կ'ընէր
հասկցնելու զէնքի ու ինքնապաշտպանութեան պահանջը Սե-
բաստիոյ ծանրագլուխ աղաներուն ու զանգուածներուն... Ոչ
մէկ տարակոյս, եթէ, Մարտ 31ի համիդեան հակահարուածէն
յետոյ, Մեծ Հայքի իսլամ ընդհանրութիւնը ձայնակցէր Ազա-
նայի քարոզչութեան, 1895ի համիդեան զարհուրանքները պիտի
կրկնուէին շատ աւելի խոշոր ծաւալով...:

Կազմակերպութիւնը սոսկումով կ'անդրադառնար այդ ցա-
ւոտ իրողութեան վրայ, հայ ժողովուրդի այդ թուլամորթ կրա-
ւորականութեան վրայ, որ յաւիտենական անէծքի պէս կը
հալածէ մեր ցեղը... Եւ Դաշնակցութեան կեդրոնական օր-
գանը կը գրէր այն օրերուն (Մայիս, 1909) .

«... Տաշեզի պէս թաւալում ենք մորիկների յորձանքնե-
րում, առանց հակազդել կարողանալու... և կամենալու: Ամէն
մի յորձանք վրայ է հասնում աւելի հուժկու, քան նախըն-
թացը և ամէն մէկը գտնում է մեզ յաւիտենօրէն նոյն տեղում

ցցուած, ծոյլ ու անպատրաստ, հեղգ ու աղերսող... Չարժար-
ծեցիքնք փրկարար կրակը... Տուժեցինք անեղօրէն և, ո՛վ գիտէ,
որքա՛ն դեռ պիտի տուժենք ապագայում... Այսօր, երբ աղգո-
ւիին նստած ենք ճարճատող հրարուխի վրայ... հայ ժողովըր-
դային ընդհանրութիւնը նոյն ճակատագրապաշտ ընդհանրու-
թիւնն է, գերի Fatumին, ապաւինած նախախնամութեան,
Աւետարանին ու բոլոր աստուածներին, որոնցից երբեք չլսեց
նա ըմբոստութեան, մարդկային արժանապատուութեան խօսքը,
այլ միշտ միայն հնազանդութեան ու նախրային համակեր-
պութեան պատուիրաններ:

«... Պէ՛տք է ցնցուի, վերջապէս, մահաբեր անշարժու-
թիւնը: Հայ ազգը կա՛մ պիտի ապրի բանաւոր ու պատուաւոր
գոյութեամբ, կա՛մ թէ բնաւ պիտի չապրի: Հայ ժողովուրդը
կա՛մ պիտի դառնայ մարտական մի համայնք, կարող ինքզին-
քը պաշտպանելու, կամ թէ ի սպառ պիտի չքանայ երկրի
երեսից»:

Դարձեալ կազմակերպութիւնն էր, որ իր սուղ միջոցներով
պէտք է հոգար նաեւ ինքնապաշտպանութեան ցաւոտ հոգե-
րը: Յառաջ տանելով իր մշակութային խաղաղ, շինարար աշ-
խատանքը, նա կը ստեղծէր կարեւորագոյն վայրերու մէջ նաեւ
իր զէնքի ու ռազմամթերքի պահեստները և կը մարզէր երի-
տասարդութիւնը: Ոչ մի յետին միտք, ոչ մի անջատական
ձգտում այդ զինական պատրաստութիւններուն մէջ: Անոնց
միակ նպատակն էր պաշտպանել Սահմանադրութիւնը իսլամ
հակայեղափոխական խուժաններուն դէմ: Չէ՞ որ նոյն կարգա-
խօսն էր ընդունեալ նոյն ինքն կառավարութիւնը, իթթի-
հատը^{*)}: Չէ՞ որ հակայեղափոխական ամէն մի արշաւանք
Քուրդիոյ մէջ պիտի դառնար ճակատագրօրէն հակահայ ու հա-
յաջինջ արշաւանք...

Այդ զարհուրելի ճշմարտութիւնը լիովին արդարացաւ Մարտ
31ի անմիջական հետեւանք՝ Ազանայի կատասարոֆի մէջ: Եւ

^{*)} Հետագային, Քալեաթ-էնվեր դահլիճը, իր հայազինջ եղեւնը արդարացնելու
ճպատակով, լուսանկարել ռուս մեր ռազմական խումբերն ու զէնքի պահեստները
եւ խոտը ալրոմի մէջ ներկայացուց Եւրոպայի հանրային կարծիքին՝ ցուցնելու հա-
մար, թէ ի՛նչպէս հայ յեղափոխականները դաւեր են օսմանեան սահմանադրական
պետութեան դէմ...

Մարտ 31-ն ու Ադանան իրենց անմիջական անդրադարձումներն ունեցան Բարձր Հայքում: Սոփոաներու և ամէն կարգի համիդեաններու վոճակը գլուխ բարձրացուց ամենէն առաջ էրզրումի մէջ, Հայոց հինաւուրց մայրաքաղաքը ահ ու սարսափի օրեր կ'ապրէր Մարտ 31-ի վազորդային, Կարնոյ թրքութիւնը կը պատրաստուէր վերարժարձել Կիլիկեան արիւնոտ տեսարանները: Եւ Կարնոյ ազդանշանին կը սպասէր սրտատրոփ ողջ Բարձր Հայքի շէրիաթապալտ իսլամ խուժանը... Իթթիհատը կացութեան տէրն էր մայրաքաղաքում, Մահեդոնիայում, բայց հեռաւոր զաւառներու մէջ դեռ չէր ձգած խոր արմատներ և նոյն իսկ «Իթթիհատական» անունը կրող կոմիտէներուն, ակումբներուն մէջ դեռ կը վխտային համիդականներն ու շէրիաթիները, պատրաստ՝ գոռալու «կեցցէ՛ փագիշանը» և «զա՛րկ գեալուրներուն»...

Երբ լուր հասաւ, թէ Սուլթան Համիդ տապալէր է Իթթիհատը և վերստին հագեր է միահեծան արքայի ծիրանին, էրզրումի թրքութիւնը բերկրանքի ճիչ արձակեց, փողոցներն ու հրապարակները լեցուեցան ամբոխով, որ գինովցած կը տօնէր Շէրիաթի յաղթանակը և բունցք կը թափահարէր հայերու դէմ: Չէ՞ որ «Հուրիէթ»ը հայ գեալուրի դիւային գործն էր— նիւթուած իսլամի, Շէրիաթի դէմ: Չէ՞ որ «Հուրիէթ»ի օրերուն հայը ամենէն բարձր կը պոռար իր ցնծութիւնը: Ազատութիւնը միայն ու միայն հայերուն համար էր, եորոնք կ'ուզեն իրենց անկախ թագաւորութիւնը հիմնել և գերի դարձնել իսլամ ժողովուրդը... Այսպէս կը խորհէր տգէտ ամբոխը, և թուրք շէրիաթական առաջնորդներն ալ եռանդով կը տարածէին այդ ոճրանիւթ գաղտաստը:

Հայերն ալ— միշտ բուռն ու անզուսպ իրենց հոգեկան արտայայտութիւններուն մէջ— անգիտակցարար իւղ կը թափէին սոփոայական կրակին վրայ: Դարձեալ— նզովելի ճակատագիր... վեց դարու գերութեան շղթաները թօթափած՝ հայ մարդը իրաւունք չունէ՛ր խինդ ու բերկրանքի ճիչ արձակելու, պէ՛տք էր լուռ կենար, սանձ ու զսպանակ դնէր իր որսին ու մտածումին: Չկրցաւ Գուցէ և անկարելի էր հոգեբանօրէն:

Եւ հայկական ցոյցերը Սահմանադրութեան առաջին օրերուն եղան իրօք գեր-խանդավառ, յուզումնալից և տղմկալից:

Տարաբախտաբար, այդպէս եղած էր մանաւանդ Ադանայի մէջ, ուր գրեթէ չկար Դաշնակցութիւնը և ուր առանձնապէս փայլեցաւ իր թեթեւամիտ bravadeներով առաջնորդը, Մուշեղ եպիսկ. (այժմ աշխարհական)։

Բայց անգամ հայոց անմեղ ցոյցերը— կատարուած նոյնիսկ թուրք իշխանութիւններու մասնակցութեամբ— կը գրգռէին իսլամ պարզուկ ամբոխը։ Ահա տեսարան մը, Հայոց կարիւնը կը դիմաւորէր աքսորէ վերադարձող մեր Վարդգէսը։ Յեղափոխական հին, համբաւաւոր պարագլուխը, որ 18 տարիէ ի վեր հեռացած էր կարիւնէն և որ երկար տարիներ տքացեր էր Վանայ, Տիգրանակերտի բանտերուն մէջ, մահուան դատապարտուեր, ապա ցմահ բերդարգելութեան, — այժմ, զնդաններէն ազատուած, մէկ ոտքը կաղ, մարտիրոսութեան դափնեպսակով կը վերադառնար իր ծննդավայրը։ Մեր ականատես ընկերներէն մին, Հայկ Սէրէնկիւլեան (Վարդգէսի եղբորորդին) այսպէս կը նկարագրէ համաժողովրդական այդ մեծ ցոյցը ի պատիւ Հ. Յ. Դաշնակցութեան վեթերանին.

«Ողջ կարիւնը շարժման մէջ էր (1908 թ. Յուլիսի վերջերը)։ Կարեւոր անցքին առթիւ, իթթիհատական իշխանութիւնը ըրեր էր անհրաժեշտ կարգադրութիւններ, Չօրքը Երզընկայի դռնէն դուրս՝ տողանցքի կեցած էր։ Քաղաքի խանութները գոցուեր էին։ Հայ և թուրք վարժարաններու աշակերտութիւնը, կուսակալը, զինուորական հրամանատարը իրենց շքախումբով, հայ լուսաւորչական, կաթողիկ և յոյն եկեղեցական դասը դպիրներով, ամէնքը բարեւի կեցած էին։ Ապա ժողովուրդի հնագին բազմութիւն, այր, կին, երեխայ— ամէնքը աչքերնին յառած դէպի նոյն կէտը— Երզնկայի ճամբան, ուսկից պիտի երեւար Վարդգէսը *): Ահա նա հասաւ վերջապէս։ Հետն էր բանտակից բաղէշցի ենոքը։ Օղը թնդաց զինուորական և Սանասարեան նուագախումբերու որտէն և մեր վառվառն երիտասարդութեան անվերջ կեցցէներէն։ Վարդգէս, խորապէս յուզուած, խօսեցաւ զողջունն ձայնով հակիրճ ճառ մը, նախ

* Մեր դժբախտ ընկերոջ պառաւ մայրը, որ քան քառի անհուն կարօտով սպասեր էր իր քառագիւղ գաւակի վերադարձին,— մեռեր էր այլ յաղթական բափօրէն վեց օր առաջ...

թրքերէն, ապա հայերէն: Ապա թափօրը մտաւ քաղաք: Թուրք ժողովուրդը, խունուած տանիքներուն վրայ, զարմանքով կը դիտէր ցոյցը, և թուրքեր խորհրդաւոր կերպով կը շշնջային.

— «Էմհէնիլերին բոփալ փաւայը իմիօ» ...

Զարմանալի չէ, որ Էրզրումի թրքութիւնը առաջինը խլրտաց հայերու գէմ, Մարտ 31ի համիդեան հակահարուածէն անմիջապէս յետոյ, Խլրտում մը, որ, բարեբախտաբար, հետեւանք չունեցաւ, շնորհիւ Դաշնակցութեան տեղական գործիչներու— մասնաւորապէս Եղիշէ Թոփչեանի— պազարիւն և վճռական կեցուածքին:

Վերը նկարագրուած Յուլիսեան մեծ ցոյցէն ութ ամիս յետոյ, Մարտ 3ի յաջորդ օրը տեղի կ'ունենար Էրզրումի մէջ ուրիշ տեսակ, մեծադժուկ թափօր մը: Այս անգամ թուրքերն էին, որ խուռն բաղմութեամբ մեծ մզկիթէն ելնելով կ'ողողէին հայկական թաղամասը, յայտնապէս չար դիտաւորութեամբ: Անակնկալ մը չէր մերոնց համար, անոնք գիտէին, որ Ազանայէն յետոյ կարգը պիտի գար Էրզրումին: Ուստի և կազմակերպութիւնը պատրաստուած էր ընդունելու թրքական Վանդէի հարուածը: Ունէինք այն ատեն կարնոյ մէջ շարք մը հին, փորձուած, անձնուէր գործիչներ: Այնտեղ էր Դուրբալսը, որ առկէ երկու տարի առաջ թիֆլիզեան կռիւներու միջոցին չարաչար պատժեր էր հակայեղափոխական թաթար խուժանը: Այնտեղ էր փոքրիկ Սարգիսը, Շուշիի, Կանձակի, Վանայ յանդուգն, անվեհեր Սարգիսը, Արամի, Իշխանի արժանաւոր ընկերն ու զինակիցը, որ ամբողջ կեանքը անցուցեր էր գետնա-յարկերու մէջ, յեղափոխական վտանգաւոր դաւադրութիւններու շուրջ: Այնտեղ էր Փիլոսը արեւմտահայ լաւագոյն երիտասարդ գործիչներէն, որ 1907ին առաջնակարգ դեր խաղաց թուրք ժողովրդական շարժումներուն մէջ, գործեց ապա երկար տարիներ Թոստոմի հետ *) նոյն կարնոյ մէջ, մինչեւ 1915ի Ապրիլեան Եղեռնը, որուն զոհ գնաց: Այնտեղ էր Ասրուհի, ուրիշ մտաւորական գործիչ մը, Փիլոսի աջ թաղուկը, նոյնպէս տեղւոյն Կեղրոնական կոմիտէի անդամ: Այնտեղ էին Դաշնակցութեան

*) Թոստոմը ճաստառեցաւ Կարինում 1909ից, որպէս ազգային դպրոցի սեփեհ, ապա քուուցիչ Մամասարեանում, մինչև 1914 բուռակեր:

հին գործիչներէն՝ Սեղրակ վարժապետը, ժամագործ Սեղրակը, սահարբի Պետրոսը, ապա Վահան Գասպարեան, Բարթոլ Օտապաշեան, Ճինօ, Միսաք Կոյոթեան, Հրաչ Լուսպարոնեան և ուրիշներ, մեծ մասամբ Սանասարեանի վառվառն սերունդէն: Այնտեղ էր Սղիբե Թոփշեան, թիֆլիզեան ծանօթ գործիչն ու հրապարակագիրը. որ ուսական ուստիկանութենէն հալածական՝ անցեր էր Կարին Երուանդ Թամարեան ծածկանունով, իր ձեռքն էր առեր «Յառաջ» թերթի ու տեղական ուժերու ղեկավարութիւնը և կարճ միջոցում վաստիկեր էր մեծ ժողովրդականութիւն, դարձեր էր երիտասարդութեան կուռքերէն մէկը:

Դաշնակցութեան Կեդր. Մարմինը շարք մը զգուշական միջոցներ ձեռք առած էր՝ վտանգը դիմաւորելու համար: Կրուուող խումբերը տեղաւորուել էին նախորոշուած դիրքերու մէջ, առատ զէնք ու ռազմամթերքով: Կեդրոնական դիրքը Սանասարեան վարժարանն էր, ուր կը գտնուէր մեր սպայակոյտը: Թոփշեան դիրքէ-դիրք կը պտըտէր ու հրահանգներ կուտար: Կուսակցութիւնը ունէր նաեւ յատուկ մարդիկ թրքական շըրջանները լրտեսելու և գաղտնիքներ բերելու համար: Ամենէն ճարպիկ և հնարագէտ լրտեսն էր մեր վաղամեծիկ Տիգրան Խաջիկեանը (Արզուման), կարնեցի, այն ատեն Սանասարեանի աշակերտ *):

Կը մտնէին մեր լրտեսները, որպէս ծպտեալ մահմետականներ, մզկիթներու, զօրանոցներու մէջ, կը խառնուէին խուժանին և ամէն տեղ նոյն կարգախօսը կը լսէին, վերէն տրուած հրահանգը:

— Առիթներ ստեղծել, որ հայերը նախայարձակ լինեն և ապա զարնել— ջարդ ու թալան...

Իսկ Թոփշեանի հրահանգն էր.

— Տղերք, զգո՛յշ ու պաղարիւն. յարձակումի առիթ չտաք— երբ կը կրակեն, այն ատեն միայն կը պատասխանէք:

*) Հետագային ուսանող փրենում, ապա, համալսարանն աւարեիլ էի, տղանցաւոր քաղաքի եւ գործիչ Բալկաններում, երկար տարիներ կուսակցութեան լիազօր Բալլարիայում, սիրում ու գուրգուրուած վերաբերում մէջ իր արտակարգ հիւմարի, անհնազանդութեան, փայլուն քննադատութիւններուն եւ քննարկութեան համար:

Այն օրը, երբ պիտի կատարուէր թուրքերու ցոյցը, հայոց խանութները գոց էին, կազմակերպութեան հրամանով, և շատ քիչերը կ'ելլէին տուներէն: Յատուկ թռուցիկով արգիւտած էր գինեատուներ երթալ, քէֆեր սարքել և գինովցած վիճակի մէջ փողոց ելնել:

«Կէսօրուան մօտ— կը պատմէ նոյն ակնատես շայկ Սէրէնկիւլեան— կը քալէինք թոփչեանի հետ դէպի «Յառաջ»ի տպարանը: Մէկ ալ տեսանք հեռուէն անգին թուրք ամբոխ մը, մեծ մզկիթէն ելնելով կը շարժէր հայոց ամայի թաղամասով դէպի մեր կողմը՝ զինուած հրացաններով, փայտերով, կացիններով, Եւ մէջքերնուն՝ պարկեր, թալլելիք իրերը կրելու համար: Առջևէն կը քալէին միւֆթին և քանի մը զինուորականներ: «Շէրիաթ» կ'ուզենք»— կը պոռային... Մէկ երկու տասնեակ թուրք լակտաներ ալ աջ ու ձախ քարեր կը նետէին: Տեսանք անոնց մէջ մեր սիրելի Արզումանը, որ նոյնպէս մզկիթէն կուգար, գացեր էր լսելու միւֆթին գրգռիչ, սազմական ճառը և թուրք ամբոխի հետ միասին կը պոռար «Եաշարն Փատիշահը»։ նոյնպէս քար կը մը նետեց դէպի հայոց ընթերցարանը և ապակիներէն մէկը ջարդեց, կամենալով, անշուշտ, ցուցնել թուրքերուն, որ ինքն ալ հայատեաց թուրք օղլու թուրք մըն է...

Խուժանը կը շարժէր մեր ետեւէն, մօտ յիսուսն քայլ տարածութեան վրայ: Թոփչեան փողոցի ճիշդ մէջտեղը կեցաւ և կտրուկ շեշտով հրահանգեց ինձի, որ ետ դառնամ ու միւֆթի էֆէնտիին հարցնեմ, թէ ի՞նչ կայ, արդեօք հայերուն վտանգ մը կը սպառնա՞յ: Գացի ու թոփչեանի յանձնարարութիւնը ճշդութեամբ կատարեցի: Միւֆթին փոքր ինչ շուարած պատասխանեց.

— «Բարեւ տարէք Երուանդ էֆէնտիին, հայերուն դէմ ոչինչ չկայ, մենք Շէրիաթ կ'ուզենք»...

Քիչ ետքը, երբ հաւաքուած էինք մեր կեդրոնական դիրքին մէջ, Սանասարեան վարժարանում, յանկարծ մեծ դուռէն ներս մտան քանի մը թուրք զինուորականներ— ամէնքն ալ իթթիհատական ճանչցուած, բայց այժմ նոյն համիդական խուժանի մէջ— և ըսին, թէ կ'ուզեն Երուանդ էֆէնտիին տեսնել: Տղաներէն մէկը, թուրք սպաներու երեւոյթէն գերազրգիւ վիճակի մէջ, ատրճանակին բլթակը քաշեց եկուորները զարնելու հա-

մարտի Թոփչեան իսկոյն ոտքի հարուածով արգելք եղաւ ու ընդառաջ գնաց սպաներուն, որոնք յայտնեցին, թէ եկեր են Դաշնակցութեան զինապահետէն քանի մը ձեռնառումքեր խնդրելու Սանմանադրութիւնը պաշտպանելու համար... Թոփչեան ցաւելով պատասխանեց, թէ «աւելորդ ուժեր չունինք պահեստին մէջ»:

Էրզրումի թուրքերը չհետեւեցան իրենց կիլիկեան ցեղակիցներուն, որոնք քաջ էին անդէն ժողովուրդի հանդէպ, խուժանները վարանեցան հայ զինուած, ինքնապաշտպան խումբերուն առջեւ, որոնք պատրաստ էին խիստ սուղ գնով զոհարելու իրենց կեանքը... Իսկ մինչ այս մինչ այն՝ Արգիւլ Համիդ վերջնականապէս վար գլորեցաւ իր գանէն և Կարնոյ, Մեծ Հայքի հայութիւնը շունչ առաւ: Կարինէն ծայր տուած հրդեհը պիտի ճարակէր ողջ թրքահայաստանը: Հայ արիներու փառանգը և իր առաջնորդը անմոռանալի ծառայութիւն մը մատուցին այդ բախտորոշ օրերուն իրենց հարազատ ժողովուրդին. իրողութիւն մը՝ որ հաստատեց յաջորդ օրը Կարնոյ անգլիական հիւպատոսը, երբ Սանասարեանի տնօրէն Արուսեանի ու Սողիկեանի ընկերակցութեամբ եկաւ անձամբ տեսնելու Թոփչեանը և դրուատելու անոր գեղեցիկ պաղարիւնը, տակտն ու վճռականութիւնը, որով ամբողջ գաւառներու հայութիւնը ազատեցաւ մեծ կոտորածէ:

«Սիրելի եղիչէ Թոփչեանը իր պարթեւ հասակով, հպարտ ու հանդարտ քայլուածքով, իր ազնիւ նկարագրով և խանդավառ հայրենասիրութեամբ անջնջելի յիշատակ թողուց զինքը ճանչցող բոլոր կարնեցիներու սրտերուն մէջ» — այսպէս կ'եզրափակէ իր պատմութիւնը մեր ականատես ընկերը:

Հ. Յ. ԳԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿԻԼԻԿԻԱ

Երկրորդ Ընդհ. ժողովի որոշումը.— Գործնական քայլեր.— Մարի մուսթր եւ ձերբակալումը.— Կիլիկիոյ Պատասխանատու Մարմին.— Դեմքեր.— Հրաշի ափսասանքը Իզմիրի մէջ եւ ձերբակալումը.— Զաւարեանի եւ Վարդանի ուսումնասիրական պայտը Կիլիկիայում.— Վհատեցուցիչ եզրակացութիւններ Լեոնավայի ժողովուրդի մասին.— Հնչակեաններու գործելակերպը.— Ներսի եւ դրսի դատակցական գործիչներ.— Կիլիկիան՝ Վիեննայի Ընդհանուր ժողովի մէջ.— Վարդանի եւ Զաւարեանի զեկոյցները.— Վիճաբանութիւն եւ բանաձեւ.—

Գալոց պատմագիրը, անտարակոյս, զարմանքով պիտի արձանագրէ, որ հայ քաղաքական մեծագոյն կուսակցութիւնը իր այնքան ծաւալուն և այլազան գործունէութեան շրջանէն գրեթէ բոլորովին դուրս թողած է Կիլիկիան:

Անշուշտ, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան գործունէութեան առանցքը պէտք է կազմէր բուն Հայաստանը: Այնտեղ էր խաղացուեր դարերէ ի վեր հայոց պատմութեան մեծ Դրաման: Այնտեղ էր ծնունդ տուեր հայկական խնդիրը և դարձեր միջազգային քաղաքականութեան հարց: Այնտեղ և ամենէն աւելի դաժան էր թուրք-քրտական կրկնակի լուծը և միլիոնաւոր հայերու տառապանքը:

Բայց հայկական շարժման ունիվերսալները չէին կարող անտեսել— և չանտեսեցին— Կիլիկիան, որ նոյնպէս հարազատ միջավայր մըն է, հայոց աշխարհէն անջատուած, բերրի, արեւոտ, գեղածիժող երկիր մը, ուր դարերով թաւալեր է ազգային կեանքը, թողնելով հայ աշխատանքի ու քաղաքակրթութեան թանկագին յուշեր ու յուշարձաններ:

Հ. Յ. Դաշնակցութեան վարիչները չէին կարող անտեսել այդ հարուստ երկրամասի աշխարհագրական դիրքը, որ մեծա-

մեծ առաւելութիւններ կ'ընծեռէր ապստամբական ձեռնարկներու համար: Անոնք գիտէին, թէ ո՞րքան համեմատաբար գիւրին էր այդ վայրերուն մէջ դուրսէն ներս մտցնել զէնք ու ռազմամթերք, շնորհիւ ծովի ու Եւրոպայի մերձաւորութեան և թէ ո՞րքան արագութեամբ արձագանգ կը գտնէին Եւրոպայի մէջ Զէյթուն ու այլուր կատարուած դէպքերը: 1895ին հնչակեաններու կազմակերպած ապստամբութիւնը— անգամ իր համեստ միջոցներով, յախուռն ու հապճեպ պատրաստութեամբ— ամբողջ ամիսներ զբաղեցուց Եւրոպայի հանրային կարծիքն ու դիւանագիտական շրջանները: Իսկ 1901ին, երբ Կիլիկիոյ հայաշատ վայրերում կար կոտորածի լուրջ սպառնալիք, — տեղւոյն մեր ընկերներու տուած ահազանգը («Պոս Արմենիա»ի և Արեւմտեան Բիւրոյի միջոցով) պատճառ եղաւ, որ նախարար Իելիասէ, մեր ազգեցիկ բարեկամներու ճնշման տակ, ճամբէր ֆրանսական նաւատորմը Մերսին և կանխէր հաւանական ազէտը:

Իաշնակցականները չէին անտեսեր և այն պարագան, որ Կիլիկիոյ մէջ չկար քաղաքական շահերու ուժեղ մրցում, հակամարտութիւն, — կը բացակայէր այդ վայրերէն հայոց արիւնարբու ստուը՝ ցարական Ռուսաստանը, որ բուռն կերպով շահագրգռուած էր Մեծ Հայաստանով և կը վիժեցնէր արեւմըտեան պետութիւններու բոլոր փորձերը լուծելու հայկական հարցը:

Որ Իաշնակցութիւնը միանգամայն անտարբեր չէր զէպի Կիլիկիոյ ճակատագիրը և լաւ կը գիտակցէր շարք մը նպաստաւոր ազդակներու կարեւորութեանը, ատորապացոյց է հետեւեալ բանաձեւը, զոր ընդունեց էր մեր Երկրորդ Ընդհ. Ժողովը 1896ի վերջերուն, Կիլիկեան ջարդերու և Զէյթունի ու Զոք-Մարզուանի հերոսական դիմադրութիւններու թարմ տպաւորութեան տակ. —

«Ժողովը, աչքի առաջ ունենալով Լեռնավայրի անառիկ դիրքը, տեղական ժողովուրդի յեղափոխական ուժը և ընդհանրապէս միւս յարմարութիւններն ու առաւելութիւնները, որոշեց լուրջ ուշադրութիւն դարձնել այդ կէտի վրայ և այնտեղ ուղարկել կազմակերպող-զեկավարող մի ուժ»:

Քիչ յետոյ, կուսակցութիւնը որոշեց Ժողովի այդ վճիռը գործնական քայլի վերածել: 1897էն կը սկսի առաջին գործիչներու գաղտնի մուտքը Կիլիկիոյ մէջ — «Պոնտացի» եւայլն:

Յաջորդ տարին, Յրդ Ընդհանուր ժողովը աւելի լրջօրէն կը զբաղի Կիլիկիոյ խնդրով, կ'որոշէ ընդունիլ զայն որպէս Սասնոյ համարժէք կեդրոնացման վայր, կը սահմանէ համապատասխան բիւջէ, ինչպէս նաեւ, նկատի ունենալով Կիլիկիոյ կարեւոր ընկերներու բացակայութիւնը ժողովէն, կը յանձնարարուի Արեւմտ. Բիւրոյին, Կիլիկիոյ պատասխանատու ընկերներու համաձայնութեամբ կազմել «Կիլիկիոյ Պատասխանատու Մարմին», անոր համար թեկնածու կ'ընդունուին Հրաչ և Մար:

1898 Նոյ. վերջերուն, Մար, բուլղար անցազրով, կը յաջողի տեղաւորուիլ Կիլիկիոյ մէջ ու ձեռք կը զարնէ Կազմակերպութեան գործին, Բայց առաջին քայլերուն իսկ կը մատնուի Վերակազմեալ Հնչակեաններու կողմէ և կը ձերբակալուի *): Մարի ձերբակալումը պատճառ կը դառնայ Պոնտացիի երկրէն դուրս ելնելուն, վասն զի մատնիչները զինքն ալ կը ճանչնային: Հրաչը տակաւին դուրսը կը մնար, կազմակերպական գործը այդպիսով կանգ առաւ:

1900ին, Պատասխանատու Մարմնի կողմէ Կիլիկիա զրկուեցաւ Ռահվեք, որ ջանաց վերահաստատել խզուած կապերը, Իր մասնակցութեամբ տեղի ունեցաւ Երջանային ժողով, Գրեթէ նոյն ատենները, 1901ի գարնան, Յիլիպէի մէջ տեղի ունեցաւ կուսակցութեան կամքը ներկայացնող մարմնի ժողովը, որուն համար մեկնեցաւ Աղեքսանդրիայէն Պատասխ. Մարմնի միակ անդամ Հրաչը: Ժողովը կը վերակազմէ լուծուած Պատասխ. Մարմինը, Հրաչին միացնելով երեք նոր ընկերներ՝ Բուլղարացի Պետոն, Ատոն Երկաքը և Մաւսինը: Մինչ Աղեքսանդրիայէն ներսի ընկերներուն հետ կը շարունակէր թղթակցիլ Վահրամը:

Եւ.— կարծէք ճակատագրական էր— գործը դարձեալ չքալեց, Նորընտրի Պատասխ. Մարմնի անդամները բոլորովին տարբեր ճամբաներ բռնեցին: Բուլղարացի Պետոն զնաց կրո-

* Շուրջ վեց տարի Մաւսի բանին մէջ տալէ յետոյ, Միխայլ Մաւսիոսեան— Մար, մաւուր, անձնուէր յեղափոխական մը, ազատ արձակուեցաւ կէս-անդամայնոյ վիճակի մէջ, բաճուած սուր յոյսով, որմէ ստուպեցաւ մինչև մահը: «Իրօճակ»ի մէջ պատմ է իր բանային յուշերը և Եւրք մը յօդուածներ: Սկսաւ բանի ր տարի առաջ, Երեւանի մէջ:

ուելու թուրքերուն դէմ, մակեդոնացի հայդուկներուն հետ, և ձերբակալուելով կախաղան հանուեցաւ: Աշոտ Երկաթ, երկար վարանու մներէ յետոյ, լքեց Կիլիկիան, մտաւ Բարձր Հայք և նուիրուեցաւ Սասնոյ գործին: Մարտինը, որ Ամերիկա կը գանուէր, Աշոտ Երկաթին հետ, նոյնպէս երկար ձգձգեց իր մեկնումը: Ընկերներէն ոմանք իրենց վարանու մներուն պատճառ կը բերէին այն, որ՝ հակառակ Ընդհ. Ժողովի որոշումին՝ կը պակտէր դրամական խոշոր ֆոնդ մը Կիլիկիոյ գործը արագօրէն ու մեծ ծաւալով յառաջ տանելու համար: Այդ իսկ պատճառով, Հրաչն ալ, որ իրօք միակ ղեկավարն էր ընդարձակ շրջանի բոլոր գործերուն, փոխանակ երկիր մտնելու, անցաւ Իզմիր և երկար ատեն զբաղեցաւ բռնի դրամական հանգանակութեամբ, որուն հետեւանքով պիտի նետուէր բանա երկար տարիներով:

Ապա Պատասխ. Մարմնի անգամ ընտրուեցաւ Ասլան (Ռուբէն Զարդարեան). որ սակայն, նոյնպէս հեռաւորութեան ու այլ պատճառներով չկրցաւ գործօն մասնակցութիւն առնել կազմակերպական աշխատանքներուն մէջ, Ներսը կը մնար Ռանվեր, որ, մատնութեան սպառնալիքին տակ, կերպով մը կը վարէր իր քարոզչութիւնը: Տեղական մարմինն հետզհետէ միացան Ա. Լեւոն Սամուել և Կիլիկեան (վերջինը, ադանացի, նորաւարտ բժիշկ, յեղափոխական մկրտուեցաւ. Ժընեւի մէջ, Քրիստափորի ձեռքով):

Հրաչ արդէն բանան էր, մեծանարուստ Պալեոզեանի սպանութեան առիթով, Իզմիրի կրեստաները, ինչպէս և Պոլսոյ ու արտասահմանի բոլոր թրքահայ ջոջերը երբեք յօժարակամ չբացին իրենց քսակը՝ անգամ Կիլիկիոյ ազատագրութեան համար:

1902ի վերջերը Աղեքսանդրիա հասաւ Մարտինը և ստանձնեց գործերու ղեկը: Նախ ջանաց կարգադրել դրամական խընդիրը Արեւմտեան Բիւրոյի և Ամերիկայի Կ. Կոմիտէի հետ: Իր առաջարկութեամբ Պատ. Մարմնի մէջ մտան Վահրամ, Առանձար և Աղասէր: Երջանային Ժողով մըն ալ տեղի ունեցաւ Ալեքսանտրէզ, Ա. Լեւոն գնաց Զէյթուն՝ գետինը շօշափելու: Գաղանի հաղորդակցութեան գիծեր հաստատուեցան, որ կը միացնէին վտանգաւոր վայրերը՝ Սոր-Վիրապ, Կարաւան,

Սահմանաբերդ և Արծուաբերդ, կեդրոն ունենալով Հովիտը *): Ահա թէ ինչ կը կարգանք Լեոնավայրի Հ. Յ. Դ. Պատ. Կ. Կ.ի տեղեկագրին մէջ, ուր կը պատմուի Կիլիկիոյ մեր անցուդարձը 1898 թուականէն մինչեւ 1903:

«Ռահվերի հետ վերջին անգամ երկիր մտան նոր ընկերներ՝ Սարհատ և Արամ. Ապա հասաւ Ազանա՝ Քեռիի խումբի անդամներէն մին, Խումբեր՝ Մոցի, Կարաւանի, Օվասիսի, Զրվէժի, Խոր-Վիրապի մէջ և այլ տեղեր: Նաեւ քանի մը կոուսող ուժեր, որոնք քաջածանօթ էին Լեոնավայրի սայերուն ու կիրճերուն ու լեոնային ճամբաներուն: Նաեւ կապեր ու համակիրներ էլ մա-Դաղի վրայ գանուող հայկական գիւղախումբերու մէջ, Շատ մը բժիշկ-ուսանողներ ամերիկեան ու եւրոպական վարժարաններէն՝ նոյնպէս յարած Դաշնակցութեան կոմիտէ մը Հովիտին մէջ և քանի մը տասնեակ ընկերներ: Նմանապէս՝ կազմակերպութիւն մը երկու տասնեակ ընկերներով՝ Սահմանաբերդի մէջ, Վերջապէս, կոմիտէ մը Արծուաբերդի մէջ՝ Աշոտ Լեւոնի ղեկավարութեան տակ, քանի մը աղքեցիկ քաղաքացիներու համակրութիւնը վայելող...»

Այս բոլոր անցուդարձերէն յետոյ Կիլիկիա անցան, Սոփիայի Ընդհանուր Ժողովի որոշման համեմատ, Դաշնակցութեան երկու հեղինակաւոր ու խղճամբիտ ղէմքեր, մէկը մեծ մտաւարական Զուարեանը — միւսը համբաւաւոր ռազմիկ — Շատախի ու Խանասորի Վարդանը —, որոնք, երկարատեւ պրպտումներէ և ուսումնասիրութենէ յետոյ, եկան տարբեր, աւելի յոռետես եղբակացութեան թէ՛ գործող ուժերու և թէ՛ շարժման հնարաւորութիւններու մասին:

Դիմենք այժմ այդ երկու աղբիւրներուն, Վարդան 4—5 ամիս մնաց, գլխաւորապէս Այնթապի շրջանում: Զուարեանի ուսումնասիրական պատշտները տեւեցին շուրջ մէկ տարի, երկրի այլ և այլ շրջաններուն մէջ, Մեր առջեւն է անոր ընդարձակ տեղեկագիրը, իր ձեռքով գրուած: Բազմակողմանի և բովանդակալի, ինչպէս Սիմոնի բոլոր հետազոտութիւնները: Լեցուն փոստերով, ծանօթութիւններով՝ երկրի, ժողովուրդի

*) Կեղծ անուններ Կիլիկիոյ զանազան վայրերու:

կացութեան մասին՝ աշխարհագրական, ցեղագրական, տնտեսական, քաղաքական, կրօնա-դաւանական և մշակութային:

Եւ ահա մեր ընկերոջ գիտողութիւնները.

Աշխարհագրական դիրքը եզակի է, անշուշտ. Նպաստաւոր են և քաղաքական պայմանները, քանի որ Ռուսիոյ ազդեցութիւնը չկայ, իսկ միւս մեծ պետութիւններն ալ շահագրգռուած են երկրի անգործութեամբ, վասն զի ամէնքն ալ լայն առետուր ունին այնտեղ: Հայերութիւր 100—130 հազար, բայց տարաբախտաբար ցիրուցան, հիւսուած օտար տարբերու հետ, կամ շրջապատուած անոնցմով, իսկ զուտ հայաբնակ շրջանները— Ուլնիա, Ադանա, Հաճըն, Մարաշ, Զէյթուն, Չոք Մարզուան, Քեսապ, իրենց գիւղերով— կը գտնուին իրարմէ հեռու մէկուկէս-երկու օր տարածութեամբ (16 ժամէն մինչեւ 24... ժամը հաշուելով չորս քիլոմէթրը): Չոք-Մարզուանէն մինչեւ Զէյթուն՝ 3—4 օր .. Լեռնային ճամբաներն ալ աւելի կարճ չեն՝ իրենց գփուարութիւններուն պատճառով: Հայ բնակչութիւնը օժտուած՝ լեռնականներու յատուկ դրական ու բացասական յատկութիւններով: Շատ քիչ զինուած և ան ալ գրեթէ միայն չիֆթաներով ու շէշխաններով, Ընդարձակ տարածութիւններու վրայ— թրքախօս, Հայ աղաւաղուած բարառը պահած են ուլնիացիք, հաճընցիք և քեսապցիք: Մաքուր հայերէն կը խօսի շատ տեղ նոր սերունդը միայն, դպրոցաւարտ երիտասարդութիւնը *):

Այս ամէնը, Սիմոնի կարծիքով, խոչընդոտ են ազատագրական շարժման համար: Միւս կողմէն ալ կրօնական-դաւանական բաժանումները կը ջլատեն հայութեան ուժը կիլիկիոյ մէջ: Մեծ թիւ կը կազմեն կաթոլիկ հայերը, իսկ «70—90ական թուականներուն անոնց վրայ աւելցան բողոքականները»: Յայտնի է արդէն կաթոլիկներու մեծամասնութեան ուժացումը, Բայց Սիմոն կ'ըսէ, թէ «բողոքականները ազգային տեսակէտով կաթոլիկներից աւելի վտանգաւոր են. նրանց դպրոցներում ու եկեղեցիներում հայերէնը փոխարինուած է թուրքերէնով»:

Թոյլ է ազգային գիտակցութիւնը կիլիկիոյ հայութեան

*) Չմոռանա՛մ, որ Զաւարեան բեր է իր պոյսը ասիլէ 27 ասիլ առաջ:

մէջ. աւելի եւս թոյլ է յեղափոխական դիտակցութիւնը և բարքերն այլասերած:

«Ամէն մէկը, կ'ըսէ Սիմոն, խլորդի նման մտած է իր բոյնը, չի տեսնում լոյս աշխարհ, չի բացում եղբօրն իսկ»...

Այդպէս էր ընդհանուր պատկերը, ըստ Զաւարեանի: (Այդպէս է և ըստ Վարդանի, Կայիի, անշուշտ, սակաւաթիւ ովասիաները— Զէյթուն, Չոք-Մարզուան, Քեսապ— և անոնք են մերոնց յոյսը: Բայց այդ տեղերն ալ տակաւին չունէինք քիչ-չատ լուրջ կազմակերպութիւններ:

Ընդհանուր տպաւորութիւնը՝ վհատեցուցիչ, Այն աստիճան, որ Զաւարեան կը դժուարանայ զրական կարծիք մը արտայայտել ապստամբական շարժման հնարաւորութեան մասին և կը գրէ այս տխուր տողերը.

— «Գործը յաջողութեամբ պսակելու համար (այսինքն յաջող ապստամբութիւն մը կազմակերպելու համար կիլիկիոյ մէջ. Մ. Վ.) պահանջուում է դեռ եւս շատ ու շատ աշխատանք, գուցէ նոյնքան ուժեր, որքան մենք տուած ենք Վասպուրահանին կամ Սասուն-Մշոյ դաշտին»...

Յոռետես եզրակացութիւն մը, որ ժամանակին վիշտ պատճառեց խանդավառ կիլիկիապաշտներուն— շատուոր են անոնք— որոնց աչքին այդ երկիրը կը ներկայանար միշտ շրջապատուած հերոսութեան ու փառքի լուսապսակով, դեռ 1862 թուականի զէյթունեան մեծ օրերէն ի վեր:

Տարաբախտաբար, հնչակեաններն ալ, որ բաւական աշխատանք թափեր և առաջնորդեր էին 1895ի կռիւները, միւս կողմէն ալ իրենց ձախող գործելակերպով յուսախաբ ըրեր էին քիչ-չատ զգայուն ու գիտակից տարրերը: Արագ ու շլացուցիչ հիֆեներու հետամուտ և սիրահար նուազագոյն դիմադրութեան ձամբաներու՝ այդտեղ եւս հնչակեանները չէին հոգացեր քիչ-չատ զինելու ժողովուրդը, արծարծելու զանգուածներուն մէջ յեղափոխական գիտակցութիւն, ինքնապաշտպանութեան ու զոհաբերութեան վարժեցնելու երիտասարդութիւնը, Զաւարեան, որ հեռու էր կուսակցական մոլեռանդութենէ և ատելութենէ, իր այդ տեղեկագրին մէջ դառնութեամբ կը խօսի հնչակեաններու մասին.

— «Նրանք ունեցած են մարմիններ ամէն տեղ, որոնք շատ

տեղեր կոտորածների զէպքում կենդանի մեռեալներ հանդիսացան»:

Մենք տեսանք այդ հակառակորդ տարրերու տակտիկը նաեւ միջկուսակցական յարաբերութեանց մէջ: Մինչ շրայր ու Մուրատ, հնչակեան անունը կրելով, որոշ ատեն կը գործէին Մեծ Հայքում Դաշնակցութեան օժանդակութեամբ, — անդին, Կիլիկիայում, մեր առաջին գործիչները կը բախէին այդ հակառակորդներու թշնամութեան ու մինչեւ իսկ մատնութեան: Եւ Կիլիկիոյ մեր մարմնի տեղեկագիրը, ներկայացուած 1904ին Սոփիայի մեր Լինդհանուր ժողովին, կը սկսի այս տրամեցուցիչ տողերով.

«Հայ Յեզ. Դաշնակցութիւնը 1895ին առաջին անգամ իր ուշադրութեան առարկայ կը դարձնէ Լեռնավայրը, երբ Արծուաբերդը ապստամբութեան դրօշը պարզած էր: Ապստամբութեան ընթացքին կը հանդիպինք (դաշնակցական) ընկերներու, որոնք, Կիպրոսի ափերը խմբուած, նիւթական և բարոյական աջակցութիւն կ'առաջարկէին հնչակեաններուն, որոնք այն ատեն հոն հաստատուած միակ կազմակերպութիւնն էին, բայց կը մերժուին անոնցմէ: Այս մերժումէն յուսահատ, մերայինք աչքերնին կը դարձնեն Լեռնավայրէն, որ իրենց համար անանցանելի կը մնար»...

Մարդիկ, տխուր մրցակցութեան տենդով բռնուած, մենաշնորհ ըրեր էին ե՛ւ Կիլիկիան, ե՛ւ Փոքր Հայքը և չէին ուզեր որեւէ ուրիշ յեղափոխական մարմին մը տեսնել այդ վայրերուն մէջ... Մոլեռանդներ եղած են նաեւ մեր դաշնակցական շարքերուն մէջ, բայց կուսակցութեան վարիչ կեդրոնները, բարեբախտաբար, զերծ են եղեր այդ նեղճակատ փոքրոգութենէն, աւելի վեհանձն ու լայնախոհ՝ գաղափարական հակառակորդներու հանդէպ:

Քիչ չեն եղած դաշնակցականներ, որոնք, տեսնելով այդ կոուաղան հակառակորդներու բռնած դիրքը, քարոզեր են, որ Դաշնակցութիւնը մի անգամ ընդմիշտ հրաժարի այդ «հնչակեան» վայրերէն և նոյն իսկ աջակցի հակառակորդներուն՝ Կիլիկիոյ մէջ անոնց վարած աշխատանքներուն մէջ...

Այս տակտիկը ընդունելու հակամէտ էր նոյնինքն Քրիստափոր, 1900 թուականին, երբ կը գրէր Ահարոնեանին և տողերուս հեղինակին այն ընդարձակ նամակը — միութեան

խնդրի առթիւ.— որմէ քաղուած քներ բերինք նախորդ գլուխներէն մէկուն մէջ, Մեր ընկերը ցանկալի կը սեպէր. ի միջի այլոց, որ Վերակազմեալ հնչակեաններու և հայ շէզոք տարրերու նախաձեռնութեամբ և մեր մասնակցութեամբ կայանալիք համաժողովը սահմանէր տեսակ մը աօխասանքի բաժանում . . . (Օրինակ, Դաշնակցութիւնը ստանձնէր շարժման ղեկավարութիւնը միայն Մեծ Հայքի, իսկ միւս կազմակերպութիւնները՝ Կիլիկիոյ ու Փոքր Հայքի մէջ):

Զաւարեան, այո՛, ինչպէս և շատ մը ուրիշ ընկերներ, հնչակեաններու գործելակերպին կը վերագրէին մասամբ Լեոնավայրի մեռելային վիճակը, յեղափոխական գիտակցութեան պակասը, ժողովուրդի ճնշուած ու լքուն տրամադրութիւնը և Դաշնակցութեան ձախողութիւնները Կիլիկիայում: Մեծագոյն պատճառներէն էր, անտարակոյս, և այն՝ որ 1895ի անցքերէն ի վեր, Զէյթունի ապստամբութենէն և անձնատուութենէն յետոյ, թուրք կառավարութիւնը արթնցած, զգաստացած՝ բազմացուց իր պահականոցները Կիլիկիոյ քաղաքներուն մէջ և ամբողջ ծովեզերքում, ամբարեց զէնք ու ռազմամթերք Հաճըն, Մարաշ, Սիս, Չոք-Մարզուան, Ուրֆա, տեղաւորեց իր տասնեակ թնդանօթները Զէյթունի մէջ և սահմանեց խիստ հսկողութիւն ամենուրեք:

Վերջապէս, Կիլիկիոյ ժողովուրդի և յեղափոխականներու դժուարին կացութեան խոշոր ազդակներէն մին էր հայոց համարանք . . . Բուռ մը հայութիւն, ան ալ ցիր ու ցան, զուրկ ներքին համերաշխութենէ, ջլատուած դաւանական և այլ անջրպետներով, կորսուած մահմետական մեծ զանգուածներուն մէջ . . .

Վհատեցուցիչ էր կացութիւնը, բայց ոչ յուսահատական: Զաւարեան, այնուամենայնիւ, կը թելադրէ շարունակել աշխատանքը Լեոնավայրի մէջ: Առոնց տենդի ու աճապարանքի, հանդարտ ու շրջահայեաց, մօտենալ ժողովուրդին, զուտ կույտուրական, մշակութային քարոզչութեամբ, գիրք ու թերթ տարածելով, համերաշխութեան, հայրենասիրութեան հաւատամբը արծարծելով և միանգամայն ինքնապաշտպանութեան քարոզը մղելով, կը թելադրէ ամենէն առաջ մաքրել յեղափոխական մթնոլորտը Կիլիկիայում և անոր շուրջը . . . Զաւարեանական խարազանը անխնայ կը հարուածէ նաեւ սեփական

չարքերու մէջ բոյն դրած ամէն տեսակ բախտախնդիրները, որոնք աւելի Դաշնակցութեան ոսկիներով կը շլանային, քան սուրբ գործով... Մէկ քանին դատի կոչեց իր Կիլիկիան պտոյտի միջոցին, սաստեց ու սպառնաց վտարումով (և իրօք հետագային վտարուեցան):

Երբեք, անշուշտ, Մեծ Հայքի և Կովկասի որեւէ շրջանում Հ. Յ. Դաշնակցութիւնը չէ ունեցած այնպիսի խեղդուկ, թուսաւորուած մթնոլորտ, որպիսին ստեղծուեցաւ Կիլիկիայի նուիրական դատին շուրջը: Դժբախտութիւն էր, որ Լեռնավայրի Պատ. Մարմինը սկիզբէն իսկ զրկուեցաւ իր ամենէն արժանաւոր անդամէն, — մեր անբիծ և անձնուրաց Հրաչեմ (Թիրեաքեան), որ մէկն էր հայ ազատագրական շարժման ամենէն նախանձախնդիր և մոլեռանդ սպասաւորներէն՝ Բանկ Օտոմանի գէպքերէն ի վեր:

Եւ, այնուամենայնիւ, թո՛ւյլ կ'ընթանար Լեռնավայրի կազմակերպման աշխատանքը, գլխաւորապէս կարող ընկերներու պակասին համար... Գուցէ կուսակցութիւնն ալ, սկեպտորէն տրամագրուած, չէր մատակարարեր բոլոր անհրաժեշտ նիւթական ու այլ միջոցները, կամ գուցէ չէր ալ կարող մատակարարել... Վասն զի, ճիշդ է, «Փոթորիկ»ը խոշոր գումարներ մտցուց Դաշնակցութեան դրամարկղին մէջ — 1903ի վերջերէն — բայց անոնց մէկ պատկառելի մասը յատկացուեցաւ Պոլսոյ (Երլզըզի) և Իզմիրի դաւադրական ձեռնարկներուն ու Մեծ Հայքի կազմակերպութեանց առօրեայ սուր պէտքերուն, միւս կողմէն ալ՝ Կովկասին, ուր հայութիւնը մէկէն ի մէկ բռնուեցաւ ամենածանր տագնապով՝ եկեղեցական գոյքերու յափըշտակութեան, ապա և Թուսաստանի յեղափոխութեան ու հայթաթարական պատերազմին հետեւանքով...:

Այսպէս թէ այնպէս, ամբողջ 11 տարի, 1895էն ի վեր, երբ Հ. Յ. Դաշնակցութիւնը սկսաւ շահագրգռուիլ Կիլիկիայով, նա չկարողացաւ խոշոր քայլեր ընել այդ ճակատին վրայ և նոյն իսկ քիչ-շատ լուրջ կազմակերպութիւն ստեղծել *): Արդարեւ, Արեւմտեան Բիւրոն իր Տեղեկագրին մէջ, 1903—907 թուականներու անցուդարձի մասին, կը խոստովանի որ Կիլի-

*) Մեր գործունէութեան օրագրէն դուրս կը մնար նաեւ Փոքր Հայքը ուր Դաշնակցութիւնը գրեթէ գործօն դեր չունէր մինչև օսմանս «հուրիէրի» օրերը: Այն տեղն միայն Պոլսոյ մեր Պատ. Մարմինը

կրոյ շրջանը 1907ի սկիզբները տակաւին անկազմակերպ վիճակ մը կը ներկայացնէր:

Մեր երկու մեծ ընկերները, ուսումնասիրական իրենց պտոյտը աւարտելէ յետոյ, հեռացան Կիլիկիայէն: Մնալ չէին կարող, Քարողիչները, շարժման բուն կազմակերպիչներն ու վարիչները պէտք է գային ներսէն: Գրեցիները չէին կարող լուրջ ու տեւական գործ կատարել այդ վայրում, եւս առաւել Զաւարեանի ու Վարդանի պէս գրեցիները, որոնք տեղական ժողովուրդի լեզուն անգամ չէին գիտեր, ոչ տաճկերէնը, որ ամենէն տարածուածն էր, ոչ ալ հայկական բարբառները: Միւս կողմէն Կովկասեան փոթորիկները ստիպողաբար կը պահանջէին երկու առաջնակարգ պարագլուխներու վերադարձը:

* * *

Հինգերորդ Ընդհ. Ժողովը (Վիեննա, 1907 թ.) վերստին վիճարանութեան գրաւ Կիլիկիոյ խնդիրը:

Նախ Վարդան, ապա Զաւարեան տուին մանրամասն զեկուցումներ: Վարդան չէր փոխեր իր կարծիքը 1904ի իր պտոյտի օրերէն ի վեր:

Վարդան տուաւ նաեւ գրաւոր զեկոյց, աւելի մանրամասն:

սկսաւ նամբի բարոզիցներ ղեպի Փոքր Հայք: Սերասացի Մուրա հասասուեցաւ իր ձեռնադաշտին մէջ, ուր ծաւալեց արեակարգ բեղուն գործունէութիւն մտակութային մարզին մէջ (դպրոց, քստոն, բարոզական ամբիոններ եւ այլն), միանգամայն արժարձելով ինքնապաշտպանութեան զաղափարը: Մուրաի միացան Վարդան Շահպագ, Կայծակ Առաքել, Եղօ եւ այլն: Գացին բարոզական ու կազմակերպական նպասակով ղեպի Փոքր Հայքի այլ եւ այլ կողմեր՝ նաեւ շարք մը երիտասարդ գործիչներ, **Ռուսեղ Շահպագ, Վարուժան, Ֆերիս Ճէմիլ** եւ ուրիշներ: Առաջինը— մեր փայլուն ու խոսմնալի երիտասարդ մատուակներէն— Մուրաի հետ տրջեցաւ Տիգրանակերտ-Խարբերդ-Սերասիա: Երկրորդը, համբաւաւոր բանասէղծը, զնաց Քուրբիոյ խորերը, մինչեւ Էնկիւրի՝ ազգային համերաշխութեան զաղափար արժարձելու կարողիկ հայերուն մէջ: Ինչպէս յայնի է, երկու անձնուէր երիտասարդները նահասակութեան 1915ին, ճարագութեան համբուն վրայ: Երրորդը, Ֆերիս Ճէմիլ, դրկուած էր Կարնոյ մեր մարմին կողմէն: Նոյնպէս պատաստուած մատուակն մը, սղերցի, որ, Ներսիսեան դպրոցն աստիճան յետոյ, Լիկար տարիներ գործը էր Կարնոյ մէջ, առաջին շարժում, կազմակերպել էր Սանասարեանի դաճակցական երիտասարդութիւնը եւ սէկն էր նաեւ տեղոյն մարտական խումբերու վարիչներէն: Սպաննուեցաւ բոլշեւիկեան զնդակով, Երեւանի մէջ, Փետրուարեան պայքարութեան օրերուն, երբ ժողովրդի յաղթական գրոհին ասեւ տրագոյն դրօշակը կը պարզէր Խորհրդայնի շէնիկն վրայ:

Զաւարեան, որ ուշացեր էր կովկասի մէջ, եկաւ ու իր կարգին զեկոյց տուաւ Կիլիկիոյ մասին: Աւելի լաւատես էր, քան Վարդանը: Աւելի շատ ալ պարտեր էր Կիլիկիայում (Ջէյթուն չէր կրցեր մտնել, ինչպէս և Վարդան): Վերը յիշատակուած իր տեղեկագրի գլխաւոր մտքերը պիտի կրկնէր լաւատեսութեան շեշտով մը: Ընդհանուր ժողովի 115րդ նիստն էր... Վահագն Տաթեւեանի և Վոսմեանի քանի մը հարցումներէն յետոյ, այսպէս խօսեցաւ Սիմոն Զաւարեան.

— «Ազգաբնակչութեան 1/3 մասը հայեր են, Ընդհանուր ապստամբութեան վերաբերմամբ որոշ բան ասել զժուար է... Թայց կ'ասեմ զրահանապէս, որ դա ապագայում հնարաւոր է, եթէ այժմից պատրաստուենք: Մեր տուած կանոնագրութեան համաձայն, ոչ միայն ամէն մի զաշնակցական զէնք ունենալու է, այլ և շրջանները ունենալու են թռուցիկ խումբեր: Լաւ կազմակերպուելուց յետոյ երբ ծագի ապստամբութիւն, հնարաւոր կը լինի մի երկու ամիս դիմանալ: Իսկ այդքան ժամանակամիջոցում, նոյն իսկ մի երկու շաբաթուայ ընթացքում... պետութիւնները ստիպուած կը լինեն միջամտել, որովհետեւ անագին տնտեսական և կուլտուրական շահեր ունին... Դժուար թէ հէնց սկիզբից անկախութիւն տրուի հայերին... Նրանք ցրուած են և բռնում են լեռնաշղթան: Յամենայն դէպս, եւրոպական կոնտրոլի շնորհիւ, կը հաստատուի Կիլիկիայում իրաւակարգ... Ես առաջարկում եմ Կիլիկիան Ջէյթունի հետ միասին դարձնել մէկը մեր կազմակերպական վայրերից և յատկացնել 20,000 ֆրանք՝ պրոպագանդը աւելի ուժեղացնելու համար»:

Ապա կը արուին հարցումներ, տեղի կ'ունենայ կարծիքներու փոխանակութիւն:

Թոստով. — Հիմնական կազմակերպութեան համար պէտք է վերջ դնել միջեւ այժմ տիրող սիւստեմին և նոր ձեւով սկսել գործը: Առաջարկում եմ մեծ գումար նշանակել...

Ակնունճի. — Սխալ սիւստեմ է ուժերը ցրուել բոլոր վայրերում... Կիլիկիան այս տարի պէտք չէ դարձնել կեղրոնացման վայր: Բաւականանալու է կազմակերպական ձեռնարկներով: Այդ նպատակով բաւ է ընկեր Զաւարեանի առաջարկած 20,000 ֆրանքը:

Թոստով. — Կ'առաջարկէ համերաշխ գործել հնչակեաններու

հետ և նոյն իսկ առաջարկել անոնց, որպէս զի անոնք ալ գործեն շեռնավայրում:

Վ. Գ. Գ. Գ. — Կայ մէկ հնչակեան, որ, զատուելով իրենց կազմէն, ինքզինքը կը դնէ Դաշնակցութեան տրամադրութեան տակ՝ Կիլիկիոյ մէջ գործելու համար:

Հալո Օհանջանեան. — Չաւարեանի տեղեկագրից կարելի է եզրակացնել, որ Կիլիկիան ապագայում խոշոր դեր է խաղալու, եթէ այդ այդպէս է, ինչո՞ւ պէտք է լուրջ ուշադրութիւն դարձնել. . . ինչո՞ւ Վան, Մուշ բաւական մարդիկ ենք զրկում, հարիւր հազարներ թիւղջէ նշանակում, իսկ այդպիսի մի կարեւոր վայր անուշադրութեան մատնում: Այն մարդիկ, որոնք իրենց տրամադրելի են անում Վասպուրականի համար, ինչո՞ւ պէտք է գնան Կիլիկիա:

Գագիկ (Ստեփան Տէր Մկրտիչեան). — Ընկերոջ այդ լաւատես զեկուցումից յետոյ, գործը լիկուրից ցիւրի ենթարկելու ոչ մի հիմք չկայ. պէտք է անհրաժեշտ թիւղջէ նշանակել և մարմին ստեղծել, յեցակէտ դարձնելով մեր ապագայ գործունէութեան համար. Սա խիստ սկեպտիկ եմ հնչակեանների վերաբերմամբ. ոչ մի միտք չունի:

Սեպուհ. — Կը միանայ Համոյի կարծիքին, յայտնելով իր ուրախութիւնը, որ, Վարդանի յոռետես կարծիքէն ետք, կը լսէ Չաւարեանի խիստ լաւատես կարծիքը Կիլիկիայի վերաբերմամբ:

Չաւարեան. — Անդրադառնալով թիւղջէի հարցին, կ'ըսէ.

«Սա հակառակ եմ այժմից հարիւր հազարներ թիւղջէ նշանակելու Կիլիկիայի համար. Դրամական օժանդակութիւնը պիտի բարձրանայ աստիճանաբար՝ կազմակերպական գործի հետ»:

Նախագահ Եղիօէ Թովիչեան քուէարկութեան կը դնէ իր բանաձեւը, որ կ'ընդունուի միաձայն.

«Լսելով ընկեր Չաւարեանի զեկուցումը Կիլիկիայի մասին, Ընդհանուր Ժողովը, կարծիքների փոխանակութիւնից յետոյ, որոշեց շարունակել ջանքերը Կիլիկիայում եզած դաշնակցական կազմակերպութիւնները ուժեղացնելու և նորերը առաջացնելու: Այս նպատակով Ժողովը անհրաժեշտ է համարում տրամադրելի ընկերներից այդ վայրի համար եւս աչքի առաջ ունենալ և կազմակերպական ու պրոպագանդի գործին նպաստելու համար յատկացնել 20,000 ֆրանք»:

Ուշ էր արդէն, տարաբախտաբար, Կիլիկիոյ ազատագրութեան համար նոր ծրագիրներ յորինելու համար. Տարի մը յետոյ եկաւ «Հուրիէթ»ը և այդ բոլոր որոշումները ջուրը ընկան: